Ազգ

AZG armenian newspaper

Հոկտեմբեր 26. 1991
Շաբաթ
Եռօրեայ թերթ,
Ա տարի, թիւ 73
գինը՝ 30 կ.

հասցեն՝ Երեւան 375010
Հանրապետութեան 47
հեռախօս՝ 581841
ֆաքս՝ 562941
տելեքս՝ 243267 SULA SU

Հայ-ադրբեջանական պաշտօնական հանդիպումը՝ Իջեւանում

Երեկ, հոկտեմբերի 25-ին Իջեւանի շրջանի Կայան գիւղում կայացաւ Հայաստանի եւ Ադրբեջանի լիազօր ներկայացուցիչների առաջին պաշտօնական հանդիպումը, որին մասնակցում էին նաեւ Ռուսաստանի եւ Ղազախստանի ներկայացուցիչները: Հայաստանի պատվիրակութիւնը ղեկավարում էր ՀՀ Գերագոյն խորհրդի նախագահի առաջին տեղակալ Բարկեն Սարգսյանը, իսկ Ադրբեջանի պատվիրակութիւնը՝ փոխնախագահ Զիադ Սամեդզադեն: Կողմերը փոխանակեցին երկու հանրապետութիւնների պետական դրոշները, ընդունեցին համատեղ կոչ՝ ուղղված հայ եւ ադրբեջանցի ժողովուրդներին:

Ըստ պայմանավորվածության, հաջորդ հանդիպումը կկայանա Զանգելանում: ■

ՌԱԿ 70-ամյակին նվիրված հանդիսավոր նիստ

Ռամկավար ազատական կուսակցության 70-ամյակի տոնակատարությունները Հայաստանում եզրափակվեցին հինգշաբթի, հոկտեմբերի 24-ի երեկոյան ժամը 19-ին, Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ակադեմիական թատրոնի դահլիճում կայացած հանդիսավոր նիստով:

Հայաստանի Հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի, Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի ներկայացուցիչ Գրիգորիս եպս. Բունիաթյանի, ՀԲԸ Միության նախագահ տիկ. Լուիզ Մանուկյան-Սիմոնի, խորհրդարանի քարտուղար Արա Սահակյանի, Գերագույն խորհրդի նախագահության անդամների, պատգամավորների մասնակցությամբ նիստը բացվեց ՀՌԱԿ Հիմնադիր խորհրդի նախագահ Ռուբեն Միրզախանյանի ելույթով: ՌԱԿ-ի 70-ամյա գործունեության մասին խոսեցին բանասիրական գիտությունների թեկնածու, *«Էջմիածին»* ամսագրի խմբագիր Երվանդ Մելքոնյանը, ՌԱԿ կենտրոնական վարչության անդամ Վարդան Ուզունյանը: ՌԱԿ կենտրոնական վարչության անդամ, *«Զարթոնք»* օրաթերթի խմբագիր Պարույր Աղոյանը ընթերցեց նույն վարչության ողջույնի գիրը:

Հանդիսավոր նիստից հետո ելույթ ունեցան հանրապետության զեղարվեստական մի շարք լավագույն խմբեր:

Հանդիսության մանրամասնություններին կանդրադառնանք մեր հաջորդ համարում: ■

AT&T-ն Հայաստանը կապում է Ամերիկային

Հեռախոսային կայանը հանդիսավորությամբ բացվեց

Ինչպես արդեն տեղեկացրել էինք, Հայաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ գործում է ուղիղ հեռախոսային կապ, որն իրականացրել են AT&T ընկերությունը եւ Հայաստանի կապի նախարարությունը: Առաջին հեռախոսազրույցը տեղի է ունեցել հոկտեմբերի 11-ին, ժամը 11-ին, երբ ՌԱԿ Բոստոնի գրասենյակից AT&T-ի միջոցով միացան մեր խմբագրությանը: Եւ ահա, հոկտեմբերի 24-ին տեղի ունեցավ AT&T ընկերության երեւանյան «5ESS» կայանի բացման հանդիսավոր արարողությունը եւ կոկտեյլ: Կապի նախարար Ռոբերտ Ավոյանի, Հայաստանի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի, AT&T ընկերության փոխնախագահ Սեմ Ուիլկոքսոնի, Գարեգին սրբազանի, ՀԲԸՄ-ի նախագահ Լուիզ Մանուկյան-Սիմոնի ողջույնի խոսքերից հետո ամերիկյան ընկերության ներկայացուցիչը հավաստեց Նյու Յորքի եւ Լոս Անջելեսի հեռախոսահամարները, ու հավաքված հայ երեխաները խոսեցին ամերիկացի իրենց հայրենակիցների հետ, որից հետո Ֆաքսով ստացան ամերիկահայ երեխաների նկարչական աշխատանքները: Նյու Յորքից խոսեց AT&T ընկերության միջազգային կապերի տնօրեն Ջոն Բերնդտը, իսկ Լոս Անջելեսից՝ Հայաստանի մշակույթի նախարար Պերճ Զեյթունցյանը: Ցուցադրվեց այս առիթով բոլորակված առաջին դրոշմանիշը: Այնուհետեւ հյուրերն ուղեւորվեցին ծանոթանալու Ջրվեժում տեղակայված արբանյակային կայանին: Կապի նախարար Ռոբերտ Ավոյանը մեր թղթակցին ասաց, որ այս ծրագրի իրագործումը հնարավորություն է տալիս Հայաստանին 7 տասնամյակով ոստայն կապարել: Ծախսվել է մոտ 6 միլիոն դոլար, որից 4 միլիոնը վճարել է ամերիկյան կողմը, իսկ 2 միլիոնը՝ հայկականը: Այժմ AT&T-ի մասնագետների հետ աշխատանք է տարվում՝ փոխելու նաեւ Երեւանի հեռախոսային ցանցը եւ ավելի մեծացնելու միջազգային հեռախոսակապը: Առաջիկա ծրագրերի մեջ է մտնում Փարիզի հետ համատեղ հեռախոսակապի ստեղծումը: Հայաստանն առաջին հանրապետությունն է, որ ԱՄՆ-ի հետ արդեն իսկ ունի 180 առանձին հեռախոսային ուղիներ, այն դեպքում, երբ Մոսկվայում կա ընդամենը 64-ը: Այսպիսով, հայաստանցիներն արդեն կարող են առանց Մոսկվայի միջքաղաքային կապի ծառայության միանգամից զանգահարել ոչ միայն ԱՄՆ, այլեւ Արեւմտյան կիսագնդի այլ երկրներ: Ծրագրվում է, որ օրական կլինեն 470 հեռախոսաուղիներ՝ 5000 արբոնենտով: Հեռախոսակապի մեկ րոպեն կարժենա 12-15 ռուբլի կամ 3 դոլար:

Մեր սեփական թղթակիցներ
Բոստոն, Երեւան,
հոկտեմբերի 24, 1991

Ռուսաստանը կդառնա՞ ՆԱՏՕ-ի համաժողովի ընկերակից անդամ

Հոկտեմբերի 18-ից 23-ը Ռուսաստանի պատվիրակությունն առաջին անգամ մասնակցեց ՆԱՏՕ-ի 37-րդ համաժողովի աշխատանքին: *«ԻԹ»*-ի թղթակցին տված հարցազրույցում պատվիրակության ղեկավար, Ռուսաստանի Գերագույն խորհրդի անվտանգության կոմիտեի նախագահ Սերգեյ Ստեպաշինը հաղորդեց, որ ձեռք է բերվել ՆԱՏՕ-ի համաժողովում Ռուսաստանի ընկերակից անդամության մասին նախնական պայմանավորվածություն: Համաժողովի նիստում ելույթ ունեցան Ստեպաշինը, ինչպես նաեւ պաշտպանության նախարարության գլխավոր շտաբի պետ գեներալ Էորովը:

Առայժմ Ռուսաստանին տրամադրվեց այդ կազմակերպության մշտական դիտորդի կարգավիճակ: Սակայն Ստեպաշինը հաղորդեց, որ եթե խորհրդարանի ընկերակից անդամի կարգավիճակին հավանություն տան, ապա հարցը պաշտոնապես կներկայացվի համաժողովի հերթական նիստին, որը տեղի կունենա հաջորդ տարի հունվարին, Կանադայում:

Ստեպաշինը հաղորդեց, որ ինքն ընդգրկվել է ՆԱՏՕ-ի համաժողովի պաշտպանության եւ անվտանգության կոմիտեի կազմի մեջ:

Այդ կազմակերպությունը պատրաստակամություն հայտնեց մասնագիտական եւ ֆինանսական օգնություն ցուցաբերել կոնվերսիայի ծրագրի իրականացման գործում: Հարցերի այդ շրջանակը, Ստեպաշինի խոսքերով, կքննարկվի ՆԱՏՕ-ի ղեկավարության հետ դեկտեմբերին կայանալիք հանդիպման ժամանակ, որի համար նա արդեն ստացել է պաշտոնական հրավեր: ■

Նացիոնալ-բոլշեւիկյան բռնատիրություն Վրաստանում

Հոկտեմբերի 21-ին Մոսկվայում կարճաժամկետ կալանքի ենթարկվեց Վրաստանի արտաքին գործերի նախկին նախարար Գեորգի Խոցտարիան, որն անձնական հրավերով ժամանել է մեկնել Իսրայել: Նա հոկտեմբերի 25-ին հաղորդեց լրագրողներին, որ իրեն կանգնեցրել էին մախսաման սպաները, որոնցից մեկն ասել էր. *«Մենք ձեզ վաղուց էինք ըստասում»:*

Գ. Խոցտարիայի հայտարարությամբ, նույն օրը մամլո ասուլիսում ՊԱԿ-ի նախագահ Վադիմ Բակատինը հաստատեց, որ *«կալանավորման նախաձեռնությունը սկիզբ է առնում Թբիլիսիում»* եւ խոստացավ անցկացնել *«իշխանության վերազանցման աղաղակող դեպքի»* հետաքննությունը:

«Վրաստանի դեմոկրատական ընդդիմությունը զգում է, որ Զվիադ Գամսախուրդիան բռնատիրություն է հաստատել հանրապետությունում, ինչը կբերի քաղաքական եւ տնտեսական քաոսի», հայտարարեց Վրաստանի ազգային դեմոկրատական - կուսակցության (ԱԴԿ) գլխավոր կոմիտեի անդամ Իրակլի Կարգավելիլին: Նրա խոսքերով, նախագահի հայտարարություններն այն մասին, թե անհրաժեշտ է սկզբից հասնել անկախության եւ միայն հետո ստեղծել դեմոկրատայի հիմքեր, *«տանում են մեկուսացման եւ հղի են նացիոնալ-բոլշեւիկյան բռնատիրության հաստատմամբ»:*

Իրինա Սարիշվիլիի վկայությամբ, հանրապետությունում հիմա կան մոտ 90 քաղբանտարկյալներ: Նրա ամուսինը՝ Գեորգի Ճանտուրիան, որին մեկ ամիս բանտում պահելուց հետո ոչ մի մեղադրանք չի ներկայացվել, արդեն երկու անգամ հացադուլ է հայտարարել:

Պատասխանելով *«ԻԹ»*-ի թղթակցի հարցին, Ի. Կարգավելիլին ասաց, որ չնայած ճնշումներին, իր կուսակցությունը կշարունակի տեղեկացնել հասարակությանը Վրաստանում ստեղծված իրավիճակի մասին: Նա հաստատեց, որ հոկտեմբերի 24-ից Թբիլիսիում հեռուստակայանը գործում է ազգային գվարդիականների հարկադրության տակ: ■

Ստեղծվում է Կովկասի անկախության կուսակցություն

Վայնախական դեմոկրատական կուսակցության (Չեչենո-Ինգուշեթիա), Արխազիայի դեմոկրատական կուսակցության, Դաղստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչները կոչ արեցին ստեղծել համակովկասյան քաղաքական կազմակերպություն՝ Կովկասի անկախության կուսակցություն:

Արխազիայի դեմոկրատական կուսակցության կենտրոնից ստացված տեղեկությունների համաձայն, Կովկասի անկախության կուսակցության հիմնադիր համագումարը նախատեսվում է անցկացնել 1991թ. նոյեմբերի 1-ին, Սուխումում: ■

Խաղաղության համաժողովի հրավերները ընդունվել են

Սպիտակ տունը հայտարարեց, որ Իսրայելը ու նրա հարեւան արաբական երկրները, ինչպես նաեւ պաղեստինցիները սկզբունքորեն ընդունել են Մադրիդում կայանալիք Միջին Արեւելքի խաղաղության համաժողովի մասնակցության հրավերները: Երուսաղեմում վարչապետ Շամիրի բանները հայտնեց, որ հավանաբար վարչապետն ինքը կգլխավորի իսրայելյան պատվիրակությունը: ■

Ուկրաինան սեփական վալյուտա է ստեղծում

1992 թ. հունվար-փետրվար ամիսներին Ուկրաինայի կառավարությունը մտադիր է մտցնել բազմանվագ օգտագործման կտրոններ, որը միջանկյալ քայլ կհանդիսանա ազգային վալյուտայի ստեղծման ճանապարհին:

Ուկրաինայի ազգային բանկի վարչության նախագահ Վլադիմիր Մասվիենկոն *«ԻԹ»*-ի թղթակցին հաղորդեց, որ կտրոնները պետք է որոշ լրացում հանդիսանան ուկրաինական դրամին անցնելու ընթացքում: Վլ. Մասվիենկոյի խոսքերով, որոշում համարժեք նոր կտրոնը որպես ավանդ կընդունվի խնայբանկի բոլոր բաժանմունքներում: Կտրոնի մեկ կողմում կդրոշմվի Կիեւի հիմնադիրներից մեկը՝ «թռչող կարապը», իսկ մյուս կողմում՝ Կիեւի Սոֆիայի տաճարը: Ընդամենը նախատեսվում է տալ 5 միլիարդ կտրոններ: «Կտրոն ռուբլիները» պատրաստում են 2 եւրոպական ֆիրմաներ: ■

Հանրապետության Գխ պատգամավորների ընտրությունների կենտրոնական ընտրական հանձնաժողովը երեկվա նիստում գրանցեց եւս երկու պատգամավորների՝ Եղիա Շամշյանին՝ Արցախ 19 ընտրատարածքից եւ Յուրա Սաղաթելյանին՝ Մեծ Մազրայի 248 ընտրատարածքից: Հոկտեմբերի 27-ին կկայանան երկրորդ փուլի ընտրությունները: ■

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

Հյուսիսային Կորեան համաձայնվեց դադարեցնել Հարավային Կորեայի կառավարության տարալման փորձերը եւ ընդունեց հնարավոր հաշտության ծրագիր: Փխենյանը խոստացավ նաեւ վերջ տալ ահաբեկչությանը եւ շարունակել աշխատանքը երկու պետություններում գտնվող հարազատներին վերամիացնելու ուղղությամբ:

Հարավսլավիայի միացյալ ուժերը ճեղքեցին Խորվաթիայի պաշտպանությունը Դուբրովնիկ քաղաքի մոտ եւ գրավեցին հարավում գտնվող Կուդուրի առողջարանը: Առաջին անգամ ռմբակոծվեց Դուբրովնիկի պատմական կենտրոնը. տուժեցին երեք խաղաղ բնակիչներ: Վնասվեցին միջնադարյան եւ Վերածննդի կառույցները, այդ թվում՝ պալատն ու ամրոցը: Դուբրովնիկը պաշարված էր ավելի քան երեք շաբաթ:

Կուբայի նախագահ Կաստրոն Մեխիկոյում հանդիպեց Վենեսուելայի եւ Մեքսիկայի նախագահների հետ, որի ընթացքում վերջիններս նրան հայտնեցին, որ ինչ բան կարող են անել Կուբայի տնտեսական դժվարությունները հաղթահարելու գործում:

Հնդկաստանի վարչապետ Ռաուն այցելեց Հիմալայան շրջանում տեղի ունեցած երկրաշարժից տուժած շրջանները: Փրկարարական ջոկատների ներկայացուցիչները հայտնում են, որ նրանք արդեն չորրորդ օրն է, ինչ պայքարում են հասնել մեկուսացած քաղաքներին: Առնվազն 665 մարդ է զոհվել Ուբբար Բրադել նահանգում անցյալ երկուշաբթի օրվա երկրաշարժից: Տեղական մամուլը հաղորդում է, որ զոհվածների թիվը պետք է որ գերազանցի 1.000-ը: ■

digitised by A.R.A.R.@

«Ասիորված սարսափ» կամ իսալական խաղեր Հայաստանում

Հարություն Մովսեսի Արիսակեսյան, Հայաստանի Հայ հեղափոխական դաշնակցության կենտրոնական կոմիտեի բյուրոյի նախագահ, ծնվել է Երեւան քաղաքում 1937 թ., կրթությունը՝ բարձրագույն, ամուսնացած է, ունի երկու չափահաս երեխա:

Սկիզբը՝ ծանոթությամբ

Մեղադրական եզրակացության մեջ նշվում է, որ Հ. Արիսակեսյանը 1991 թ. օգոստոսի 21-ին բերման է ենթարկվել Երեւան քաղաքի Ներքին գործերի վարչություն: Նրան պատկանող ավտոմեքենայի մեջ գտնվող պայուսակի միջից հայտնաբերվել է «Մաուզեր» մոդելի նր. 655989 ատրճանակը, «ՏՏ» սիստեմի ատրճանակի 9 փամփուշտներ եւ ամերիկյան արտադրության գաղտնի փակով «Բոմ» մակնիշի մի դանակ: Նախաքննության ընթացքում կատարված փորձաքննությամբ պարզվել է, որ ատրճանակը սարքին է, փամփուշտները դիտվում են որպես ռազմամթերք, իսկ դանակը դասակարգվում է սառը զենքերի շարքին: Այդպիսով, նա մեղադրվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 232 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով:

Ընթացք

Հոկտեմբերի 8. Մյասնիկյանի երգանի ժողդատարան: Նշանակված ժամին դատը չի կայացավ: Ժողդատավոր Սերոբ Հայրապետյանը պատճառաբանեց, որ նախորդ օրվանից մնացած մի այլ դատավարություն պետք է վերջացնի եւ միայն սկսի նորը: Հավաքվածների նյարդերը լարվեցին: Հաջորդ օրը ժամը 12-ին Ս. Հայրապետյանի նախագահությամբ վերջապես սկսվեց դատավարությունը՝ ՀՍՍՀ պետական գինանշանի հովանու տակ:

Մթնոլորտը ծիկացած էր, դրությունը՝ սպասողական: Հարություն Արիսակեսյանը ներկայացրեց կատարվածի մանրամասները. 1991 թվականի օգոստոսի 21-ին (հեղաշրջման երրորդ օրը- հեղ.) առավոտյան ժամը 9-ին ավտոմիհինայով կնոջը տարել է աշխատանքի: Հետդարձի ճանապարհին Թումանյան եւ Աբովյան փողոցների խաչմերուկում լուսակրի մոտ շրջապատել են չորս սեփական ավտոմեքենաներով, 16 ավտոմատավորներ բռնել են եւ նստեցնելով մի այլ մեքենա տարել ՆԳ վարչություն: Նա նախապես տեղեկացրել է իր մոտ գտնվող ատրճանակի եւ դանակի մասին: Ի դեպ, եթե նախաքննության ժամանակ տրված ցուցմունքում նշել է, որ ատրճանակը ժառանգել է հորից, ապա դատարանում հայտարարեց, որ այն կուսակցության խորհրդանիշն է, եւ որ դաշնակցության շարքերն ընդունվելիս յուրաքանչյուր անդամ երդվել է՝ ձեռքը դնելով 1920-ի արտադրության ատրճանակի վրա: Նախապես չասելու պատճառն այն էր, որ այդ իրողությունը կուսակցական գաղտնիք է համարվել եւ առանց բյուրոյի հետ համաձայնության, իր կողմից արված ամեն մի հայտարարություն կդիտվեր որպես դավաճանություն: Ուսի, նախաքննության վերջում, երբ ներկայացվել էր կուսակցության որոշումը, որտեղ ասվում էր ատրճանակի կուսակցական խորհրդանիշ լինելու մասին, այդ ժամանակ միայն Արիսակեսյանը իրավունք ունեցավ առելու ճշմարտությունը: Ավելացնենք նաեւ, որ դատաքննության Վարդան Համբարձումյանի կարծիքով, այդ գրությունը դիտավորյալ չի կցվել գործին, որպեսզի որեւէ մեղմացուցիչ հանգամանք չլինի, քանզի այդ դեպքում փոխվում էր նաեւ զենքի դատապախանատուի հարցը: Բացի այդ, Արիսակեսյանը հայտարարեց, որ դրանից մի քանի օր առաջ հեռախոսով խոսել է ՆԳ նախարարի պաշտոնակատար Աշոտ Մանուչարյանի հետ եւ անձամբ նրա հետ հանդիպելու ցանկություն հայտնել: Վերջինիս տեղում չլինելու պատճառով այդ հանդիպումը քանիցս հետաձգվել է: Այդ մասին հաստատեց նաեւ վկա Ռոզա Խաչատրյանը: Բացի այդ, Արիսակեսյանը հավաստիացրեց, որ այդ օրը մտադիր է եղել գնալու ՆԳՆ եւ ատրճանակը զրաններ: Փաստը մնում է փաստ, եւ դրանում համոզվեց դատարանում նստած յուրաքանչյուր ոք, որ Արիսակեսյանի երգաղատից որեւէ մեկը դավաճանաբար հայտնել է ներքին գործոց մարմիններին, որոնք էլ, ինչպես դատաքննությանը նշեց, *«վաղ առավոտյան, դեռ իրենց աշխատանքի չհասած, շտապել են կապնավորել Արիսակեսյանին»*: Իսկ Արիսակեսյանը կատարվածը որակեց սադրանք, եւ անգամ նշեց նախկին վարչապետի եւ Հայ հեղափոխական դաշնակցության ազգային կուսակցությունները էլ զրանցված են միեւնույն՝ Հայաստանի արդարադատության նախարարության կողմից: Մի կողմ թողնելով այդ անհանդուրժողականությունը, նշենք, որ եթե անգամ հետեւենք զենքի հանձնման ժամկետին, ապա այն նույնպես ոտնահարվել է կալանավորողների կողմից: Քանզի ըստ Արիսակեսյանի, մինչեւ սեպտեմբերի 1-ը իրավունք էր վերապահված հանձնել անօրինական զենքը: Մինչդեռ օգոստոսի 21-ին մեկուսացնելով՝ զրկել են նրան զենքը հանձնելու տասնօրյա իրավունքից:

Ինչ վերաբերվում է ամերիկյան դանակին, որն Արիսակեսյանի աղջիկը ԱՄՆ-ից նվեր է բերել հորը, անցնելով արտասահմանյան եւ խորհրդային մամասներով, որտեղ այն սառը զենք չի դիտվել, չգիտես ինչո՞ւ, գնահատվել է որպես սառը զենք: Ի դեպ, փորձագետի տրված փաստաթուղթը ժխտեց դատաքննությանը, որն առաջացրեց, թե օրենքով միայն Ֆինանական դանակներն են համարվում սառը զենք, իսկ օրենքի մի այլ կետի համաձայն, փորձագետների տված եզրակացությունը բոլորովին պարտադիր չէ դատարանի համար:

Եւ ամենակերեւորը, որ նշեցին եւ՝ Արիսակեսյանը, եւ՝ վկաները, ու հատկապես կուսակցության փոխնախագահ Սերգեյ Ճուղուրյանը, պետք է հաշվի առնել այն մեծ հայրենասիրական գործը, որ մինչ այդ կազմակերպել է կուսակցությունը՝ Արիսակեսյանի գլխավորությամբ: Դա իմքնաղաշտանական ջոկատների ղեկավարումն է թե՛ սահմանամերձ շրջաններում եւ թե՛ Արցախում մղած կռիվներում: Այլապես, այդ ինչպես պատահեց, որ մի քանի ամիս առաջ զենքի կոչ անող եւ *«պայքար, պայքար, մինչեւ վերջ»* գոռացող իշխանությունները կալանավորում են մի կուսակցության առաջնորդի, կարծես թե բոլոր անօրինական զենք կրող անձանց հաշվառումը վերջացել էր եւ հասարակության համար ամենավտանգավոր անձը մնացել էր անսարք ատրճանակով կուսակցական ղեկավարը: Ինչեւէ: Առաջին օրվա դատական նիստը, ՆԳՆ-ից կանչված վկաների բացակայության պատճառով, ավարտվեց այսքանով, ուղեկցվելով պետական մեղադրող Թ. Իսկուդարյանի հոգեբանական գրոհներով, դատաքննության Վ. Համբարձումյանի պաշտպանական հակիրճ միջամտություններով, դահլիճի անհամբեր ռեպլիկներով եւ...

Եւ դատավորը հիվանդացավ

Հաջորդ օրը, հոկտեմբերի 10-ին, ինչպես նախատեսվում էր, դատը պետք է շարունակվեր: Բայց դահլիճի բողոքի եւ անհանդուրժողականության ալիքն այնքան մեծ էր, որ դատավորն իրականում հիվանդացավ: Վախից էր առաջացել լեղաքարկի նոպան, թե իրոք գերլարվածությունից, դա մնաց տասնօրյա բուժումների հետեւում: Փաստ առնչ, դատավորը կազդուրվեց, նախագահական ընտրությունները ավարտվեցին, հոկտեմբերի 21-ին նա վերադարձավ աշխատանքի, եւ հաջորդ օրն իսկ դատը վերսկսվեց:

Չմոռանամ նշել, որ դատի ընթացքում գերլարվածության մեջ էր դատարանի ողջ անձնակազմը՝ գլխավոր դատավորից մինչեւ քարտուղարուհիները: Բոլորն անհամբեր սպասում էին

Վերջաբանին

Հոկտեմբերի 22-ին դատարանը լսեց վկաներ՝ Երեւանի ներքին գործերի վարչության աշխատակիցներ Դ. Զաքարյանին եւ Ս. Աբգարյանին: Նրանց տված ցուցմունքներից պարզվեց, որ Արիսակեսյանին կանգնեցրել են ոչ թե զենքի առգրավման, այլ մեքենայի իսկությունը ճշտելու նպատակով: Հանձնարարությունը տվել է բաժնի պետը, իսկ իրենք չեն էլ իմացել, թե ում են բռնում: Միանգամից ուղեկցել են վարչություն, որ Արիսակեսյանը իմն է հայտնել զենքի մասին եւ տեղեկացրել է նաեւ, որ պատրաստվում էր այդ զենքը գրանցել ՆԳՆ-ում: Սակայն, որքան էլ զարմանալի չթվա, մոռանալով ավտոմեքենայի մասին, ՆԳՆ-ում միայն հետաքրքրվել են զենքով եւ ետաղ գործ հարուցել: Անգամ, ինչպես դատախազը նշեց, նախաքննական ցուցմունքներում մոռացել են նշել ավտոմեքենայի մասին: Այստեղից էլ կազմակերպված սադրանքի ողջ հանելուկը. կանգնեցվել է ավտոմեքենայի պատրվակով, զննելուց հետո անգամ «չի էլ պարզվել» եւ մեղադրվում է զենքի համար:

Մյուս օրը, հոկտեմբերի 23-ին, ձայնը տրվեց դատախազ Թ. Իսկուդարյանին: Վերջինս ամփոփելով ասաց, որ ՀՀ օրենքները խախտող ամեն ոք պետք է կրի արժանի պատիժ, բայց պետք է հաշվի առնել, որ ամբաստանյալը բնութագրվում է դրական, ակտիվ, հայրենասեր գործիչ է: Ստեղծել է կուսակցություն, որը ոմանց համար անցանկալի է, բայց այդ կուսակցությունը գրանցված է: Հետեւաբար նրա գործողությունները պետք է դիտվեն որպես հարգվող գործողություններ: Ուստի, ամբաստանյալ Արիսակեսյանին քր. օր. 237 հոդվածի համեմատությամբ վերջին հաշվով պետք է բողնել ազատազրկում մեկ տարի ժամանակով, որպիսին նա կրելու է ընդհանուր ռեժիմի ուղղիչ աշխատանքային գաղութում:

Այնուհետեւ հասարակական պաշտպան Մարլենա Ավդալյանը իր խոսքում նշեց, որ Արիսակեսյանը դարձել է խորհրդության առաջին զոհը, եւ նրա դեմ ուղղված սադրիչ ոտնձգությունները դատապարտվել են բոլոր ազգայնականների կողմից: Նա Արիսակեսյանին բնութագրեց որպես շիտակ ու ազնիվ հայ զինվորի: Շարունակելով հասարակական պաշտպանի ելույթը, դատապաշտպան Վ. Համբարձումյանը մանրամասն մեկնաբանեց կատարվածը եւ առաջացրեց դատախազության եւ դատավարության ընթացքում բերված ցուցմունքները, եզրակացնելով. *«ծայրահեղ դեպքում բավարարվել նրա կրած կալանքով եւ ազատ արձակել»*: Զորաժամյա խորհրդակցական ժողովից հետո, ի պատիվ իրոք անկախ ժողովրդական ատենակալներ Զուլիետա Ղարիբյանի եւ Ալիսա Գրիգորյանի, ինչպես նաեւ դատավոր Սերոբ Հայրապետյանի, դատարանը ընդունեց արժանի որոշում. *«Դատարանը հաշվի է առնում նրա կատարած հանրօգուտ աշխատանքը, եւ ՀՀ քրեական օրենսգրքի 233 հոդվածով բողնում է ամենանվազագույն չափը՝ 3 ամիս ժամանակ, որպիսին նա արդեն կրել է: Հարություն Մովսեսի Արիսակեսյանին ազատել դատարանի դահլիճից»*:

Դատն ավարտվեց ներկաների ուրախության արցունքների եւ բուռն ծափահարությունների ներքո: Ու թեեւ արդարությունը հաղթանակեց, բայց օդում կախված մնաց մի հարցական. նույն «սադրանքը» կարող է կրկնվել ամեն օր, ամեն մի հայ ազատամարտիկի հետ եւ պետությունը, որն իրեն անկախ է հռչակել, իրավունք չունի իր պաշտպանության նրվիրյալներին դարձնելու քաղաքական պարտի զոհ, ով էլ որ նա լինի:

Հակոբ ՍՍՍՏՐՅՍՆ

ՌԱԿ 70-ամյակի հանդիսությունը

Պատմության եւ հայ ժողովրդի համար հիշարժան տարի է սույն թվականը: Կարծում եմ, ի մտի ունեցած իրադարձություններն այստեղ արձանագրելու հարկ չկա: Վերոհիշյալ չընդգծված, սակայն բոլորիս ծանոթ ու հայտնի իրադարձություններին եկավ միանալու նաեւ Ռամկավար ազատական (լիբերալ-դեմոկրատական) կուսակցության 70-ամյակը:



Արտերկրի մի շարք գաղթօջախներում նշվում է ՌԱԿ-ի տարեդարձը, սակայն հատկանշական է, որ այն անցնող տասնամյակների ընթացքին նմանօրինակ հնարավորություն չունենալով, այսօր նշվում է մայր հայրենիքում, հայրենի ժողովրդի նախաձեռնությամբ:

Հոկտեմբերի 21-ի երեկոյան Հայաստանի ՌԱԿ հիմնադիր խորհրդի նախագահ Ռ. Միրզախանյանը հանդիսականին «Նաիրիս» գիտաարտադրական միավորման մշակույթի պալատի սրահում ներկայացրեց հանդիսությանը հրավիրված հյուրերին՝ ՌԱԿ կենտրոնական վարչության անդամներ Վ. Ուզունյանին եւ Պ. Աղոպաշյանին, ՌԱԿ Լիբանանի երգանային վարչության անդամ Հ. Մակարյանին եւ Ա. Վայեճյանին: Ջերմ ծափողջույններից հետո խոսափողի մոտ հրավիրվեց օրվա բանախոսը՝ Պարույր Աղոպաշյանը («Զարթոնք» օրաթերթի խմբագիր), որն իր խոսքում մասնավորապես անդրադարձավ ՌԱԿ-ի անցած ուղուն ու գաղափարախոսությանը:

«Ռամկավար ազատական կուսակցությունը այս օրերում աշխարհով մեկ կնշեն իր հիմնադրության եւ վերամկրտության 70-ամյակը: 70-ամյակ մը, որուն ծնունդը անհրաժեշտություն էր մեր ժողովրդի պատմության մեջ: 70 տարի առաջ բոցը մը տեսլաղաշ, ազգային գործիչներ հիմը կդնեին այս կուսակցության, այն հավատքով ու համոզմունքով, որ ան էական առաքելություն մը պիտի ունենա մեր հայրենիքին եւ ժողովուրդին համար... Ամբողջ 70 տարի ՌԱԿ-ը եղավ այն եզակի ազգային քաղաքական կազմակերպությունը, որ ջատագովեց ռամկավարական սկզբունքներն ու գաղափարախոսությունը, հիմնվելով իսկական ազատականության դրույթներուն վրա, որ սեփականատիրությունը, ազատ եւ անկաշկանդ տնտեսությունը, բազմակարծությունը եւ ազատախոհությունը կմընային հիմնական սյոաջադրանքներ: Այդուհանդերձ, ՌԱԿ-ը չբաժնելով ու չընդունելով Հայաստանի անցնող 70 տարիներու վարչաձեւային կարգը ու դրվածքը, չհակադրվեցավ անոր, այլ տրամաբանությամբ ու գիտակցությամբ, որ տվյալ պայմաններուն մեջ պատեհ չէր ռեժիմը փոխել ժողովուրդին ու հայրենիքին հետ, որքան աղ ան ըլլար անբաղձալի կամ անհանդուրժելի: Մենք կհավատայինք ու կրհավատանք ժողովուրդեն, ժողովուրդով եւ ժողովուրդին համար կարգախոսին ու կհավատայինք, որ ուր կամ կանուխ հայրենիք պիտի ունենա իր, իմքնիշխանությունն ու գերակայությունը, որ ժողովրդավարական մտածումները հող պիտի շահին ու գործնական դրսեւորում պիտի ունենային:

Ասոնք փաստական իրողություններ ու հաստատումներ են, որոնք ցույց կուտան Ռամկավար ազատական կուսակցության իրատես եւ առարկայական վարքագիծը, որքան ալ անմիտ խեղաթյուրումներ եւ անտեղի վերագրումներ կըլլան մեր հասցեին: Վերջին հաշվով պատմությունը պիտի տա իր վճիռը: Շրջահայաց ու գիտակից մեր ժողովուրդը պիտի կողմնորոշվի այս ուղղությամբ ու մանավանդ ժամանակը պիտի հաստատ այս իրականությունը: Մենք կողջունենք հայրենիքի վերազարթոնքը, դեռի ժողովրդավարություն իր համրաթայ, բայց ամուր ընթացքը, հողաբնորհումի առկայությունը, սեփականության եւ ազատ շուկայի իրավիճակը...»:

Օրվա բանախոսի ելույթը բնականաբար ավելի ծավալուն էր, որն ամբողջությամբ այս սյունակով չի տրվում, բայց նշենք, որ Պ. Աղոպաշյանը իր խոսքի ավարտին Ռամկավար ազատական կուսակցության կենտրոնական վարչության անունից ողջունեց հայրենի ժողովրդին, Հայաստանի ՌԱԿ-ի հիմնումը, նոր հանրապետության վերածնունդը, Լեւոն Տեր-Պետրոսյանի նախագահ ընտրվելու իրողությունը եւ բոլորին շնորհավորեց ՌԱԿ 70-ամյակի առիթով:

Հանդիսությունն ավարտվեց համերգային ճոխ ծրագրով, որի կազմակերպման համար ջանք ու կորով չէր խնայել Հայաստանի ՌԱԿ Շենգավիթի Մ. Տամասյան ակումբի վարչությունը:

Ծորա ԳԱՅԱՆՅԱՆ

digitised by A.R.A.R.@



ՌԱԿ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության տնտեսության ռեֆորմի սկզբունքները (նախագիծ)

Ֆինանսա-վարկային համակարգը

Սույն ոլորտի ռեֆորմի սկզբունքների հիմնական նպատակները հետեւյալն են.

ա) միասնական դրամական միավորի՝ ռուբլու պայմաններում, հնարավորության սահմաններում ինքնուրույն ֆինանսա-վարկային համակարգի ձեւավորումը,

բ) ինքնավար բյուջետային համակարգի ստեղծումը, այլեւ աղակենտրոնացումը եւ բյուջետային հաղորդակցության արմատական փոփոխությունը,

գ) առկա ֆինանսա-վարկային համակարգի վերափոխումը՝ արդյունավետ, ժամանակակից շուկայական ենթակառուցվածք դարձնելու նպատակով:

Վերոհիշյալ նպատակների իրացման համար անհրաժեշտ է, նախ եւ առաջ այլ հանրապետությունների հետ միասին, պայմանավորվել միութենական կառավարության հետ՝ դրամական էմիսիայի եւ ընդհանրապես ֆինանսական հաղորդակցության հիմնադրույթների, այլեւ գնագոյացման հաղորդակցության, վարկային եւ բյուջետային հաղորդակցության եւ այլն, ընդհանուր սկզբունքների եւ ընթացակարգերի մասին:

Անհրաժեշտ է, հնարավորության սահմաններում, ձեւավորել միությունից անկախ դրամական շրջանառության համակարգը, որը սեփական դրամական միավորին անցնելու հիմնական նախադայմանն է: Այս գործընթացը բաղկացած է հետեւյալ փուլերից.

ա) անկախ հաշվարկային ցանցի ստեղծում,

բ) հաշվարկների ոչ կանխիկ ձեւերի եւ հաշվարկների զուգահեռ համակարգի լայն ներդնում,

գ) ինքնուրույն երկմակարդակ բանկային համակարգի ձեւավորումը, ինչը հնարավոր է Հայաստանում գտնվող բոլոր բանկային հիմնարկությունների իրենց բոլոր ակտիվներով եւ պասիվներով, այլեւ ռեգիոնային, կենտրոնական եւ այլ Ֆոնդերի համապատասխան մասի միությունից Հայաստանին փոխանցման միջոցով, ինչպես նաեւ՝ ստեղծելով կոմերցիոն բանկերի սեփական լայն ցանց,

դ) Հայաստանի բանկի՝ որպես Կենտրոնական պետական բանկի իրական կարգավիճակի աղահովում,

ե) միջազգային հաշվարկների ինքնուրույն համակարգի ստեղծում,

զ) ինքնուրույն վաղուսային ռեզերվների (Ֆոնդերի) ձեւավորում:

Ֆինանսա-վարկային համակարգը անմիջականորեն իրացվում է ժողովրդական տնտեսությունում՝ բանկերի եւ այլ վարկային հիմնարկությունների, այսինքն՝ վարկաբանկային համակարգի միջոցով:

Ֆինանսա-վարկային համակարգի ռեֆորմը սկսվում է համակարգի ռեֆորմից: ՀՀ բանկային համակարգի ռեֆորմը երկմակարդակ համակարգին անցում է ենթադրում.

ա) Հայաստանի պետական կենտրոնական բանկ (կամ պետական բանկերի համակարգ),

բ) շուկայական ենթահամակարգի կարեւորագույն տարրը հանդիսացող կոմերցիոն բանկեր եւ այլ վարկային հիմնարկություններ:

Հայաստանի կենտրոնական բանկը անկախ է կառավարությունից եւ ենթակա չէ նրա անմիջական միջնորդությանը, բեւեւ վերահսկվում է իր կողմից: Բանկը պատասխանատու է ազգային դրամական միավորի (վերջինիս ներդրման դեպքում) կայունության աղահովման համար: Բանկը աղահովում է վարկա-դրամական պորտում միասնական պետական հաղորդակցության իրացումը, մշակում եւ ճշտությամբ կատարում է, օրենսդրության սահմաններում, կոմերցիոն բանկերի եւ այլ վարկային հիմնարկությունների գործունեության պետական կարգավորման եւ վերահսկման օրենքները:

Հայաստանի կենտրոնական բանկը հատուկ միջոցների կիրառմամբ աղահովում է համապատասխան տնտեսական հաղորդակցության իրացումը: Այդ միջոցներն են.

ա) թղթադրամի էմիսիայի իրավունքը,

բ) հաշվարկային հաղորդակցություն,

գ) արժեթղթերի դոնբաց շուկայի հաղորդակցություն,

դ) նվազագույն ռեզերվների հաղորդակցություն,

ե) դեպոզիտային հաղորդակցություն:

Շուկայական ենթակառուցվածքի կարեւորագույն տարրի՝ կոմերցիոն բանկերի վրա պատասխանատվություն է դրվում Հայաստանի տարածքում ձեռնարկությունների, կազմակերպությունների, հաղորդացիների ֆինանսային, դրամական եւ վարկա-հաշվարկային սպասարկման անմիջական իրագործման համար:

Կատարելով դրամական միջնորդների ֆունկցիան՝ հատուցման հիմքի վրա, կոմերցիոն բանկերը հանրապետությունում գործում են ՀՀ օրենսդրությամբ եւ Հայաստանի կենտրոնական բանկի նորմատիվ ակտերով սահմանափակված մրցակցության պայմաններում: Հայաստանի տարածքում գործունեության կոորդինացման եւ լայնածավալ ծրագրերի համատեղ իրագործման նպատակով, կոմերցիոն բանկերը կարող են ազատորեն միություններ, ասոցիացիաներ, կոնսորցիումներ, հոլդինգներ եւ այլ կազմակերպություններ հիմնել:

Հայաստանի Հանրապետությունում կոմերցիոն բանկերը ստեղծվում են հետեւյալ սկզբունքներով.

ա) կանոնադրական Ֆոնդի (բաժնետիրական ընկերությունների, սահմանափակ պատասխանատվության ընկերությունների, մասնավոր ձեռնարկությունների եւ այլ ձեւով) ձեւավորում,

բ) ազգային պատկանելիության (ազգային, համատեղ, արտասահմանյան),

գ) ըստ կատարվող գործողությունների (ունիվերսալ, մասնագիտացված),

դ) ըստ ճյուղային եւ ռեգիոնալ կողմնորոշման:

Ունիվերսալ բանկերը իրավասու են կատարել բանկային գործողությունների բոլոր տեսակները: Մասնագիտացված բանկերը կատարում են մեկ կամ մի քանի տեսակի բանկային գործողություններ, ինչը կարգավորվում է ՀՀ հատուկ օրենսդրությամբ, որը խոչընդոտում կամ արգելում է տվյալ բանկերին բազմատեսակ գործողություններ կատարել: Բանկերի մասնագիտացումը նպաստում է դրամի եւ կապիտալների շուկայի կայունացմանը:

Հայաստանի Հանրապետությունում կարող են ստեղծվել եւ գործել հատուկ կոմերցիոն վարկային հիմնարկությունների հետեւյալ տեսակները. ինվեստիցիոն բանկեր, խնայողական բանկեր (դրամարկղեր), հիպոթեքային բանկեր, սպառողական վարկի բանկեր, աղահովագրական կոմպանիաներ, արտահանման եւ ներմուծման բանկեր (արտաքին առեւտրի բանկեր), լիզինգային կոմպանիաներ:

Հայաստանի կենտրոնական բանկը կարգավորում է կոմերցիոն բանկերի գործունեությունը, առաջնորդվելով հետեւյալ հիմնադրույթներով.

ա) վարկային ռեսուրսների վերաբաշխում բանկերի միջեւ,

բ) տոկոսային հաղորդակցություն,

գ) կոմերցիոն բանկերի կողմից Կենտրոնական բանկում տեղաբաշխվող ռեզերվային Ֆոնդերի նորմեր:

Ի տարբերություն զարգացած երկրներում ընդունված պրակտիկայի, վարկային ռեսուրսների վերաբաշխումը ամբողջաիրական տնտեսությունից շուկայականին անցնելու ժամանակահատվածում դրամական հաղորդակցության իրացման կարեւորագույն միջոցն է: Անցումային փուլը միտ աչքի է ընկնում դրամական ռեսուրսների, ավանդների բավարար ռեզերվներ չունեցող նորաստեղծ կոմերցիոն բանկերի բարձր պահանջարկով: Խոշոր ռեսուրսներ ունեցող բանկերի միջոցների վերաբաշխումը իրականացվում է միայն Հայաստանի կենտրոնական բանկի միջոցով:

Լրացուցիչ ֆինանսավորումը (վարկային ռեսուրսների վերաբաշխումը) կարող է կատարվել կարճաժամկետ եւ երկարաժամկետ ժամանակահատվածներում:

Հայաստանի կենտրոնական բանկը որոշում է միայն ՀԿԲ-ի բանկային դեպոզիտների եւ ըստ բանկերի պարտավորությունների տրվող դրույքների չափը: Փոխատվության տոկոսի դրույքները կոմերցիոն բանկերը որոշում են ինքնուրույն:

Կոմերցիոն բանկերի՝ Հայաստանի կենտրոնական բանկում տեղաբաշխվող ռեզերվային Ֆոնդերի նորմերը որոշվում են օրենսդրությամբ:

Ժամանակակից վարկա-դրամական համակարգը լրացվում է շուկայական (ձեռնարկչական) ենթակառուցվածքի պարտադիր տարրը հանդիսացող Ֆոնդային բորսաներով, որտեղ դրամական միջոցների մոբիլիզացումը իրագործվում է արժեթղթերի առեւտրի միջոցով:

Ֆոնդային բորսաներում շրջանառություն են կատարում արժեքները, բորսային գործողություններին մասնակցելու թույլատրված արժեթղթերը. ձեռնարկությունների, ֆիրմաների (կորպորացիաների) բաժնետոմսերը եւ փոխառությունները, պետական փոխառությունները:

Արժեթղթերի շուկայի հիմնախնդիրը, հատկապես իր ձեւավորման ամբողջաիրական տնտեսությունից շուկայականին անցնելու փուլում, արժեթղթերի աղահովվածությունն է: Հայաստանի Հանրապետության կառավարության, բանկերի եւ բորսային կոմիտեների առջեւ լուրջ խնդիր է դրված. արգելել ֆիկտիվ եւ ֆիլ աղահովված արժեթղթերի շուկա ներխուժումը: Այս նպատակը իրացվում է օրենսդրական խիստ կարգավորմամբ. բանկերի եւ Ֆոնդային բորսաների գործունեության մասին հատուկ ակտերով, որտեղ մատնանշվում են արժեթղթերի էմիսիայի եւ առեւտրի օրենքները Հայաստանի Հանրապետությունում:

ՀՀ կառավարությունը կենտրոնական բանկերի, ֆինանսների նախարարության եւ այլ հիմնարկների միջոցով արժեթղթերի առաջին շրջանառության (թողարկման եւ սկզբնական շրջանառության), երկրորդ շրջանառության (հետագա առեւտրի) հատուկ կանոններ է սահմանում, նոր գործողություններ է թույլատրում, որոշակի գործարքների լիցենզիաներ է հատկացնում, երաշխավորում է բորսաների եւ այլ շուկաների հիմնումը, հաշվետվության ձեւեր եւ գործողությունների ստանդարտներ է սահմանում: Հայաստանի կառավարությունը արժեթղթերի շրջանառության վերահսկման համար հատուկ պետական հիմնարկություններ է ստեղծում:

Ձեռնարկությունների, կազմակերպությունների եւ ֆիրմաների բաժնետոմսերի եւ փոխառությունների ընդունումը՝ առաջին եւ երկրորդ շրջանառությունների, Հայաստանի Հանրապետությունում լիսինգի խիստ ընթացակարգի կիրառում է նախատեսում. հնարավոր գնորդներին հրապարակով ինֆորմացիա է ներկայացնում տվյալ կազմակերպության (ֆիրմայի, կորպորացիայի) առաջադրվող չափանիշներին համապատասխանելու մասին: Բաժնետոմսերի առաջին եւ երկրորդ շրջանառության ընդունման անհրաժեշտ պայմաններից են նաեւ ակտիվների նվազագույն չափը, եկամտաբեր գործունեությունը մի քանի տարվա ընթացքում, լիակատար ինֆորմացիան ընթացիկ դրամական դրության վերաբերյալ, վճարունակությունը եւ այլն:

Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկությունները, կազմակերպությունները եւ ֆիրմաները արժեթղթերի էմիսիա (սկզբնական շրջանառության թողարկում) են կատարում թե ինքնուրույն, թե այլ վարկային հիմնարկությունների միջոցով, վճարելով նրանց կոմիսիոն ծախսերը: Այս երկու դեպքում արժեթղթերի էմիսիան կատարվում է ըստ ՀՀ օրենսդրության: Հայաստանի Հանրապետությունում արժեթղթերի տեղաբաշխումը կատարվում է բաժանորդագրությամբ, նախնական հայտարարությամբ կամ էմիսիայից հետո ազատ վաճառով: Սկզբնական տեղաբաշխումից գոյացած շահույթը ենթակա է հարկադրմանը, իսկ երկրորդ շրջանառությունը խթանման նպատակով ազատվում է հարկերից:

Հայաստանի Հանրապետության պետական ֆինանսական համակարգը ներգրավում է պետական բյուջեն, իշխանության տեղական մարմինների բյուջեն, պետական ձեռնարկությունների եւ կազմակերպությունների ինքնուրույն բյուջեները, այլեւ սոցիալական աղահովագրման եւ աղահովման համակարգերը (Ֆոնդերը):

Հայաստանի ինքնիշխանության հեռանկարներից եւ հաջողություններից անկախ, շուկայական տնտեսության անցումը թե ամբողջական ֆինանսա-վարկային համակարգի, թե պետական բյուջեի ձեւավորման եւ բաշխման մեխանիզմի (մասնավորապես, բյուջետային հաղորդակցության աղակենտրոնացում եւ աղամոնոպոլիզացում) արմատական վերափոխում է պահանջում:

Պետական բյուջեի եկամուտների հիմնական աղբյուրը հարկերն են:

Հայաստանի Հանրապետության վարկային հաղորդակցության հիմնադրույթներն են.

ա) Հայաստանի Հանրապետությունում տնտեսվարության սուբյեկտները վարկ են մուծում միայն հանրապետական եւ տեղական բյուջեներին,

բ) Հայաստանը Միության բյուջե է փոխանցում միայն այն միջոցները, որոնք նախատեսված են հանրապետության կողմից կենտրոնին տրված լիազորությունների իրացման համար:

Հանրապետական եւ տեղական բյուջեների հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության բյուջետային օրենսդրությամբ:

Հայաստանի Հանրապետությունում ըստ գանձման եղանակի կիրառվում են հետեւյալ հարկերը՝ ուղղակի եւ անուղղակի: Ուղղակի հարկերը գանձվում են անմիջականորեն եկամուտներից (շահույթներից) կամ իրավական եւ ֆիզիկական անձանց ունեցվածքից: Ուղղակի հարկերի կառուցվածքը ներգրավում է.

ա) հողամասերի, անասունի, անշարժ գույքի տերերից գանձվող հարկերը,

բ) անձնական ուղղակի հարկերը (եկամտահարկ, գույքահարկ, գերշահույթի հարկ, ժառանգահարկ եւ նվիրատվության հարկ):

Անուղղակի հարկերը (ակցիզիսները) գանձվում են ապրանքի գների միջոցով, հիմնականում շրջանառության ոլորտում:

Հայաստանի Հանրապետությունում կիրառվում է արտոնությունների եւ սահմանափակումների պարզ եւ հստակ համակարգը. զեղչեր (կամ հավելագներ) են նախատեսվում ձեռնարկչության եւ գործունեության այն ոլորտների հարկային դրույքների համար, որոնց անհրաժեշտ է խթանել կամ սահմանափակել:

Հարկային հաղորդակցության արդյունավետ իրացման նպատակով հարկային տեսչություն է ստեղծվում:

Հարկային օրենսդրությունը Հայաստանի Հանրապետությունում ստեղծվում է, ելնելով հարկերից խուսափելու համար խստագույն պատասխանատվության սկզբունքից:

Հայաստանի Հանրապետությունում բյուջետային հաղորդակցության աղակենտրոնացումը եւ աղամոնոպոլիզացումը ենթադրում է լայն ֆինանսական իրավունքների հատկացումը իշխանության տեղական մարմիններին: Այս իրավունքները տեղական ինքնակառավարման սկզբունքի իրացման անհրաժեշտ պայմաններն են:

Հայաստանի Հանրապետության տեղական մարմինների ֆինանսական բազայի ամրապնդումը՝ ինքնուրույն սոցիալ-տնտեսական հաղորդակցություն վարելու նպատակով, ենթադրում է տեղական բյուջեների ձեւավորման ինքնուրույն աղբյուրների առկայությունը, այսինքն՝ հետեւյալ հարկերը.

ա) գույքային,

բ) բնական ռեսուրսների օգտագործման,

գ) հանդեսներից,

դ) առողջարաններից,

ե) անհատական աշխատանքային գործունեությունից,

զ) գործող օրենսդրության համապատասխան գանձվող այլ հարկեր:

Տեղական խորհուրդները տնօրինում են ռենտայի եւ տուգանքների վճարումների բոլոր տեսակները:

Շուկայական տնտեսության անցումը Հայաստանի Հանրապետությունում բյուջետային միջոցների ծախսման սկզբունքների վերանայում է պահանջում.

ա) ոչ արդյունավետ բյուջետային ծրագրերի ֆինանսավորման կասեցում,

բ) վնասաբեր ձեռնարկությունների լրավճարների եւ կապիտալ ներդրումների բյուջետային ֆինանսավորման կրճատում,

գ) սեփականաշնորհման ֆինանսավորում, դ) կոմպլեքսային նպատակային ծրագրերի եւ առավել կարեւոր ճյուղերի զարգացման ֆինանսավորում,

ե) ռիսկի հետ կապված գիտական մշակումների մասնակի բյուջետային ֆինանսավորում եւ այլն:

digitised by A.R.A.R.@

ՎԱՅԵՐԷՋ

Մեծ արուեստագէտի մը 60-ամեայ գործին հիմնադրումը

Եթէ Ֆրանսայի Վանս գիւղամաղ-ին մէջ 1986-ին բացուած «Գառզու թանգարան»ը կ'ամփոփէ մեծահռչակ նկարիչին կեանքի դարու վրայ տարածուող վաստակին ներկայացուցչական նմոյշներուն մէկ կարեւոր մասը, Մանոսի «Գառզու Եկեղեցի»ն կը խտացնէ- կամ կը տարածէ- արուեստագէտին կեանքի գործը ու ուխտաւորացը շուրջ 670 քառակուսի մէթր զբաղեցնող դահլիճներուն վրայ, երկուքն ալ թանգարան եւ նախկին եկեղեցի- միաժամանակ ըլլալով կենդանի եւ դերձախօս վկայարաններ տեսիլ եւ ուխտաւորացի մը չէ Գառզուի համար: 1957-ին Փարիզի մէջ տուած իր ցուցահանդէսը կը կրէր վերոգրեալ անուանումը: Գիտենք, թէ մարդուն առօրեան, անոր կեանքին մեքենայացումը, հիւլէական ռումբը, գերարդիական թէքնոլոգիին, մթնոլորտի աղտականութիւնը մնայուն մղձաւանջը դարձած են արուեստագէտին, որ անոնց մէջ կը տեսնէր մարդկութեան վախճանը, եթէ երբեմ, ինքնագիտակցութեամբ մը, մարդը չսանձէր դէպի վերջնական կործանում սուրացող իր գահավէժ ընթացքը: Այդ ցուցահանդէսէն կէս դար ետ, արուեստագէտին կը յանձնուէր եկեղեցի մը ամբողջ, հոն եւս դասակերելու համար Յայտնութիւնը:

Գառզու Հիմնարկին ոմանք, սակայն, շատ հիշ բան ունին, չրսելու համար ոչինչ ունին Ս. Յովհաննէսի Յայտնութենէն: Հոն ներկայացուածը ուխտաւորի վախճանը չէ կամ նոր ուխտաւորի մը աւետարանական դասակերացումը: Թող որ Ս. Գրոց մէջ խօսուած Յայտնութիւնը շատ տարտամ գաղափար մը կուտայ Աւետարանիչին մտադրութիւնին մասին: Հոս կարելի է նաեւ ասելցնել, թէ Վերածնունդի մեծանուն նկարիչները խուսափած են դասակերելէ Յայտնութիւնը, հակառակ որ անոնց գլուխ-գործոցները ներշնչուած են Ս. Գիրէն: Պատկերուած է ջրհեղեղը, որ ասելի դիւրընթռնելի եւ մաչելի նիւթ մըն է:

Գառզուի Յայտնութիւնը ընդհանուր մթնոլորտ մըն է արհաւիրքի եւ հանդարտութեան, դասերազմի եւ խաղաղութեան, այլաբանօրէն ըմբռնուած «բար»ին եւ «չար»-ին միջեւ: Յայտնութիւնը ինքնին Գառզուն է:

Հիմնարկի մուտքին, ձախէն ժաղաւէնի նման շարունակաբար կ'երկարի Յայտնութենական դասմութիւնը. հրթիռներու անծայրածիր ռազմաղաշտեր, որ մարդկութիւնը ոչնչացնող զէնքերը դասրաս են կրակ առնելու եւ վեր խոյանալու՝ կործանելու համար երկիրը: Վերեւ՝ չորս ձիաւորներուն տեղ, բարձրէն կը թռչին չորս մահաստուերանմաթ ոմբաձիգներ: Յաջորդ դասը քսաներորդ դարու երկու ցեղասպանութիւններն են, հայկականը եւ հրէականը, որոնց միջեւ նեղ երիզով դասկերուած է Բարդողաջարդը (Saint Barthelemy), Ֆրանսայի բողոքականներուն համատարած ջարդը 16-րդ դարուն: Դիմացի դասին վրայ կը շարունակուին դասմութեան մեծ կամ մոռցուած վայրագութիւնները եւ դասերազմները ամերիկեանոներու եւ վանեցիներու ջարդերը, Վերտէնի ճակատամարտը, Նափոլէոնի դասերազմները, Աթիլիայի Սարսափը, նացիզմը՝ կեռ խաչերով, համայնավարութիւնը՝ մուրճ-մանգաղով: Այս երկու դասերուն, այս աւերակներուն միջեւ կենդրոնական դասին վրայ կ'ելնէ Բաբելոնի Մեծ Պոռնիկը, խենթ եւ տոփական:

Նախկին եկեղեցւոյ խոգաթի- աբսիսի- երկու կողմերը կը ներկայացնեն ցոփութիւնը, մինչ կեդրոնէն լուսաւոր կը ճաճանչէ մերկ կին մը, «կոյսը», որոյ անթծութեան խորհրդանիշ: Ապա՝ Յայտնութիւնը կ'առնէ նոր դարձուածք. վերջ գտած է մարդկութեան կործանումի մղձաւանջը: Վերադարձ է դէպի հող, կեանքի երկրագործութիւն: Անկիւնը կ'երեւի Միէյի Անժելիսը, երկրագործ զոյգի մը իրիկնային աղօթքը դաշտին մէջ: Աջ թեւի կեդրոնական դասը յատկացուած է կենսաւիճ Կին Ծառին, որ կը խորհրդանշէ կեանքի վերընծիւղումը. թռչուններ կը գեղգեղեն. ճիւղերէն դասուղներ կը կախուին: Կը հետեւի մարդուն մեծ ուսումը դէպի անջրդեն: Մարդը կը տիրէ միջոցին. ոսք կը դնէ լուսնին վրայ: Մարդկութիւնը կը վերաշինէ իր երկիրը: Խաղաղութիւն: Զոյգ մը գրկուած կը քալէ: Վերջապէս, մուտքի դրան երկու կողմերը սկիզբն է նոր ուխտաւորի մը. «Երուսաղէմ», որմով սկսած էր մարդկութիւնը կոտորածներէ, դասերազմներէ, վայրագութիւններէ առաջ: Վերագտնուած է երկրային դրախտը. «Երկրային դրախտը հոս կամ այլուր՝ այս երկրագունդին վրայ, թէ ուրիշ մոլորակի մը մէջ, չեմ գիտեր» դիտի եզրափակէ Գառզու:

Ցեղասպանութիւն եւ հոլոքոսթ

Հայկական ցեղասպանութեան յատկացուած բաժնին առաջին փեղկը կը ներկայացնէ Հայոց ուխտաւորը- դասմական եւ նոր: Մոնկոլ ձիաւորներ կ'արշաւեն Հայաստան, որ կիսաւեր եկեղեցիներու եւ էջերու տեսարան մը կը դարձէ: Հեռուն ներկայ Հայաստանը՝ իր Մեծամօրի աթոռակալաքաղաքը, որ ուրիշ դամոկլեան սուր մըն է Հայաստանի վերեւ: Քովի որմնախորշը եւ անոր շուրջը կը գրաւեն Մեծ Եղեռնը, եւ զայն գործադրող ու անոր գործադրութիւնը նախապատրաստող եւ աւարտող դահիճները. Կարմիր Սուլթան, Թալաաթ փաշա, Մուսթաֆա Քեմալ: Գանկերու բուրգի մը վրայ կանգնած է դահճապետը, Թալաաթ, որուն գլխուն աջ եւ ձախ կողմերէն կ'երկարին Սուլթան Համիտի եւ Քեմալի դէմքերը: Եռագլխանի այս հրէը իր վեց ձեռքերով բռնած է ատրճանակներ եւ երկու եաթաղան, որոնք կիսամահիկներ կը կազմեն: Շուրջ բոլորը՝ կախաղաններ: Մի քանի փոքր եւ կորսուած եռագոյն դրօշներ կը խորհրդանշեն հայկական ազատագրութեան դայքարը կամ կ'ուզեն ցոյց տալ այն նպատակը, որուն ճանապարհին ազգ մը առաջնորդուեցաւ դէպի սպանդանոց:

Հրէական հոլոքոսթի որմնախորշը նոյն յղացքը ունի, սակայն չէ սահմանափակուած հրէական ողջակիզումով, այլ կը ներկայացնէ նաեւ երկու ջարդարար բռնատէրներ: Կեդրոնական դէմքն է Հիթլէր, որուն աջ եւ ձախ կողմերէն կը ցայտեն գլուխները Գամոդոհիոյ Կարմիր Խմէրներու դարագլուխ Pol pot-ի եւ Սթալինի:

Աժան որակում մը դիտի ըլլար «կոթողական գործ» անուանել Մանոսի Հիմնարկին որմերը նոր տեսիլով մը յաւերժացնող Գառզուի այս իրագործումը: Նկարչական եւ որմնանկարչական զոյգ արտայայտաձեւերու սմանչելի թէքնիքի մը դասակումն է գործը: Նոյն բարձրութեամբ դասատաներ բաւուած են սիւնէ սիւն եւ որմէ-որմ, տալով գիրար շաղկապող շարունակականութեան զօրաւոր արտայայտութիւնը: Առաջին մակարդակին իջնող դէմքերը կը կենդանանան, կիմասատորուին խորհի «մանրամասնութիւններով», որոնք առաջին ակնարկով կրնան աննշմար անցնիլ, որ սակայն անոնց միջոցով եւ շնորհիւ կը ստեղծուի ընդհանուր մթնոլորտը, կը յառաջանայ ամբողջական համադասկերը:

Վերջապէս, գործին միասնականութեան հիմնատարրն է նաեւ ոճը, Գառզուի եզական, յաւերժական եւ դոյրոց դարձած ոճը:

Մանոսի Յայտնութիւնը մեծ արուեստագէտի մը 60-ամեայ գործին մէկ շրջան, թիւրեղացած եւ եզակի խտացումն է:

■

Բարձրագոյն արվեստի փայլուն դասը

Բազում տառապանքների հախուռն հորձանուտից փրկության ափ նետված հայ ժողովրդի ցնծության լիաբուռն արտահայտությունը եղավ սեպտեմբերի 21-ը, երբ ողջ ժողովուրդն իր միահամուռ կամքով «ԱՅՈ» ասաց մեր յոթհազարամյա արքազան երկրի գեթ մի հատվածի անկախության ու ազատության հռչակմանը:

Ջարմանալի զուգադիպությամբ ցնծության առիթները հաջորդեցին միմյանց. 22-ին Սուսա լեռան հաղթանակի տարելիցն էր, ուր եւ 70 կաքսաներում ելթելթում էր ավանդական թարիսան, որ բաժանվեց այստեղ հավաքված տասնյակ հազարավոր ուխտավորներին:

26-27-ին տեղի ունեցավ իր գործունեության ոլորտը մեծապես ընդլայնած սփյուռքահայության հեռ կարդերի կոմիտեի 3-րդ համաժողովը, նշանակալից նրանով, որ ուխտաւորի ու երկրի տարբեր ծագերից ժամանած հայրենակիցները կրկնակի անգամ ավել էին, քան տեղացիները, վերստին ապացուցը տալով մեր ժողովրդի վերածննդի, միասնության ու համերաշխության:

Սեպտեմբերի 29-ին ս. էջմիածնում օրհնվեց մեռոնը, որով օծվելու ու մկրտվելու են մեր երջանիկ նորածինները: Այդ օրերին ընթանում էր նաեւ Սովսես խորենացու «Հայոց պատմության» 1500-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովը:

Եւ ես համարում եմ, որ Լուսին Ամարայի գալուստը Հայաստան եւ յուր բեմելը արձանագրվում է այս ցնծագին ելույթների մեջ, քանզի միջազգային համբավի երգչուհին իր բարձրագույն արվեստով միաժամանակ ազդարարում է նաեւ համահայկական միջազգային մակարդակը:

Այսքան զուգադիպություն պատահական իրադարձությունների պարզ համընկնում չէ, այլ ազգային հոգեւոր վերելքի լիաբուռն արտահայտություն: Ուրեմն, թող օրհնյալ լինի այդ վերելքը, ասվածատուր լույսի ճառագայթումը մեր հոգիների մեջ:

Այդ մշտնջենական ուխտատանքի, ջանքի, տքնության արդյունքներն է Լուսին Ամարայի արվեստը: Ես ընդգծում եմ չնվազող տքնությունը, որովհետեւ 65-ամյա տարիքում մնալ արվեստի միջազգային բեմահարթակում տարիների բարձրագույն վարպետությամբ ծեռք բերածի արդյունքը չէ միայն, այլ այն, որ այսօր իսկ նա ժուժկալ է անձնական վայելքների եւ բացառիկ շռայլ իր արվեստը բաշխելու մեջ:

Բնությունից ստացած շռայլ օժտվածությամբ Ամարան արվեստի անդաստանում իր առաջին իսկ քայլերից անդադրում կերպով սովորում է, կատարելագործվում, եւ այսօր իսկ՝ իր վարպետության բարձունքում, նա դաս է առնում իրենից անբաժան ուսուցչուհուց՝ դոկտոր պրոֆեսոր Լենդերից: Դասը, տվյալ պարագայում, ստանում է կողմնակի հսկիչի անհրաժեշտության դերը, երբ արտիստուհին միայն իր վարպետությանը չի ապավինում, այլ կարիքն ունի հսկիչի, որ կողքից անաչառորեն կարող է ստուգել բարձր արվեստի անվերապահ ու անխորտակելի չափանիշները: Ահա հանգամանք, սկզբունք, որից դաս պիտի առնի յուրաքանչյուրը, ով հավակնություն ունի քայլել իսկական արվեստի ճանապարհով:

Հավասարապես օպերային արտիստուհի եւ կամերային երգչուհի Ամարան 41 տարի է Նյու Յորքի Մետրոպոլիտեն օպերայի ասպարեզի ցանկում է, երգել է 40-ից ավելի գլխավոր եւ 20-ի չափ օժանդակ դերերգեր, երգել է աշխարհի բոլոր բեմահարթակներում՝ Չինաստանից ու Ճապոնիայից մինչեւ Հարավային Ամերիկայի, Մեքսիկայի առաջնակարգ օպերային թատրոններում, այլեւս չենք ասում ողջ Եւրոպայի մասին:

Եթե Ամարայի մուտքը Մետրոպոլիտեն՝ 1950 թ., սկսվեց Մոցարտի «**Կախարդական սրինգ**»ում գիշերային թագուհու դերերգի կատարմամբ, որի մասին բոլոր թերթերը միահամուռ գրեցին, թե՝ «**այս նոր հայտնությունն իր անգերազանցելի խաղով ու զուլալ ձայնով մեզ բոլորիս իր հետ տարավ, հիրավի, կախարդական աշխարհ... բեմում կարծես հայտնվեց Մոցարտը, մոտեցավ Ամարային, ու նրանք երկուսով միասին բարձրացան դեպի երկինք...**»: Ապա 1976-ին, նրա ծննդյան 50-ամյակի առթիվ ասվում է, թե «**Լուսին Ամարան իր հետ օպերա բերեց շլացուցիչ ձայնային պայծառություն՝ դրանով իսկ մեծ հռչակ պարգեւելով Մետրոպոլիտենին**»:

Անպարփակ է Ամարայի դերերգերի ու համերգային հայտագրերի պարունակությունը, որի մեջ մտնում են նաեւ ազգային երգացանկի ոգեցունց նմուշներ, որ նա մատուցում է միջազգային ունկնդրին: Եթե նրա լուսեղեն ձայնով Կոմիտասի «**Կռունկ**», «**Լե, լե յաման**», Ռոմանոս Մելիքյանի «**Վարդը**» եւ այլ գլուխգործոցներ հիրավի բացահայտվում են իրենց ողջ տարողությամբ եւ ստանում նոր գունեւանգներ, արդա նույնիսկ միջակ նմուշները ստանում են այնպիսի իմաստային ու ձայնեւանգային ելեւէջներ, որ թռչում են նոր բարձունքներ:

Ամարայի արվեստի գաղտնիքի բացահայտումը պետք է տեսնել նրա արտաբերած յուրաքանչյուր հնչյունի մեջ ներքին բաղկացուցիչ գտնելու, դրանց իմաստ, շարժում, հոգեկան պրկում, հուզաթաթավ երանգ ներկայացնելու բացառիկ կարողության մեջ: Եւ արդա, այդ բացառիկորեն էլ իմաստավորված, զգայնացված հնչյունները կաղակցելու, դրանցից հոգեկան ելեւէջներ, հոգեպարար հորձանքներ, կենսական հաղորդություններ ստեղծելու կարողության մեջ:

Հռչակավոր ջութակահար Իսահակ Ստերնը Ամարայի երգեցողությունն անվանել էր «հրաբուխի ջութակ»: Երբ 1965-ին Ամարան, զարդարեց Երեւանի բեմահարթակները իր օպերային եւ համերգային ելույթներով, Պարույր Սեւակը վերափոխելով Ստերնի բնութագրումը, ասաց. «**Ամարան մեզ է դարձել ջութակ ու նվագում է մեր լարերի վրա**»:

Գիտիկա ԲՈՐՏՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Մի «խոսովանության» առնչությամբ

Կրկին անդրադառնալով հեռուստառադիոմեկնման խնդիրներին, խմբագրությունը նպատակ ունի բազմակողմանիորեն մեկնաբանել դրանք, ընթերցողներին կողմնորոշվելու հնարավորություն տալու:

Խոսովանությունը հոգին մաքրելու անկեղծ արարողություն է, երբ մեն մենակ մնալով խղճի հետ խոսովանահոր (մեր օրերում զանգվածային լրատվության) միջոցով բավում են գործած մեղքերը ասածո (երբեմն դեղքում՝ հասարակության) առջև:

Այնինչ, հեռուստառադիոմեկնման նախկին նախագահը, խեղաթյուրելով այդ հասկացության բուն իմաստը, իր «խոսովանությունը» վերածել է չխոսովանելու, ճշմարտության դեմ երիցս մեղանչելու, ինքնաարդարացման միջոցի, ավելին, իբր դարձել է քաղաքական ճատրակային խաղերի զոհ, չնայած չընմեղանում է բղբակցին դասասխանելիս. *«Նման բաներ ես էլ եմ լսում, որ ինձ զոհ տրվեցին, բայց անկեղծորեն չեմ ընդունում»:*

Քաղաքական խաղեր, այլ ոչ թե հեռուստառադիոմեկնման աշխատանքները ձախողելն է դասածաո դարձել նախագահի «լինել-չլինելու» հարցը լուծելիս... Ահա թե ինչ նրդասակ է հետաղնդվում, ահա թե ինչ են ցանկանում հրամցնել հասարակությանը:

Այդ նույնը, բայց ոչ այսդես մերկաստարանոց, արտահայտեց վարչապետ (այժմ նախկին) դրն. Մանուկյանը, երբ «մարտոն վազողի ճնշումը» անդասելիորեն բարձրանալու դասճառով ի դաշտոնե «սիդված չեղավ» ներկայացնել իր առաջադրած թեկնածուի աշխատանքային եւ մարդկային բնութագիրը, եւ այնդիսի՝ փայլով, որը երբեմ չէր կարող անել Հ. Հովհաննիսյանը, եթե հանդես գար իր «բացատրություններով», «հարցեր տալով» «դասասխաններով» եւ օգտագործեր դժվարին վարժանքով ձեռք բերած իր ճատրասանական արվեստի ամբողջ զինանոցը:

Հիշեցնենք. ըստ-վարչապետի՝ *«դա այն մարդն էր, որ գիտակցում էր ինչդիսին դեմք է լինի հեռուստաթեկնոմը...», «նա այնտեղ կատարեց մեծ աշխատանք եւ կադրային փոփոխությունների հարցում, եւ կառուցվածքների հարցում...», «...համնմատած նախորդ ժամանակաշրջանի հետ, ես կասեմ, որ վիճակը լավացավ»:*

Ակներեւ է՝ հետաղնդվում է մեկ նրդասակ՝ Գերագույն խորհրդի նախագահության անվստահություն հայտնելու որոշումը զուրկ է ռեալ հիմքից: Դա առավել ընդգծվում է «թերություններին» անդրադառնալիս. *«համնմատած Ռուսաստանի հեռուստատեսության հետ, այն աճի հետ, որ ապրեց կենտրոնական հեռուստատեսությունը, Ռուսաստանի հեռուստատեսությունը, մենք տեսնում էինք, որ հեռուստաթեկնոմի աշխատանքը, այնուամենայնիվ, լրիվ չի համապատասխանում այն ցանկություններին, որ մենք ունեինք»:*

Պարադոքս չէ՞, որ նրանց «աճին», առավել եւս՝ «...ցանկություններին» լրիվ չհամապատասխանելու համար նախագահ են աշխատանքից հեռացնում:

Խոսքեր հնչեցին նաեւ Հ. Հովհաննիսյանի մարդկային կերպարը բնութագրելիս՝ *«ազնիվ, շիտակ», «բացառիկ», «ազգային մտածողություն ունեցող»:*

Ասենք, որ այդ օրը՝ սեպտեմբերի 12-ին, նստաշրջանի մասնակիցներից բացի ռադիոյով, հեռուստատեսությամբ դրն. Մանուկյանին լսում էին հազարավոր մարդիկ: Ահա թե ինչու փորձեցի «բաց նամակով» հրապարակավ բանավիճել նրա հետ):

Իրականում «կադրային եւ կառուցվածքային մեծ աշխատանքը» բոլշեւիկյան տիրահռչակ գործելակերպով հեռուստատեսության «հինը հիմնովին քանդելն ու նորը կառուցելն է»: Եւ եթե նախագահի ու նրա հեռուստատեսության գծով տեղակալի՝ Տ. Պասկեհյանի այդ «վերաշինման» իրականացումը հաշտ ու խաղաղ ընթանար (փառք աստծո՝ գտնվեցին դրա դեմ դայքարողներ), արդա չորս լուծարված գլխավոր խմբագրությունների բախին դիտի արժանանային հեռուստատեսության մյուս գլխավոր խմբագրությունները, ստորաբաժանումները, նաեւ ռադիոն: Եւ այդ կառուցվածքային «բարեփոխումների« հորձանուտի մեջ չընկնելու ձգտումը անառողջ մթնոլորտ ստեղծեց հեռուստառադիոմեկնումում՝ վարվա նկատմամբ անտրոություն, վախ, երբեմն, միմյանց նկատմամբ անվստահություն, դաստերի տակ շշուկով խոսել... Մի խոսքով, դաստերի տակ շշուկով խոսել... Մի խոսքով, կրկին դրսեւորվեց այն արատավորը, որից մարդիկ սկսել էին կամաց-կամաց ազատվել:

Եթե ավելացնենք նաեւ հեռուստատեսության այբուբենը չիմացող տասնյակ նոր մարդկանց խմբագիրներ, առավել եւս՝ գլխավոր խմբագիրներ դարձնելը, արդա դարձ կդառնա, որ այս ամենը չէր կարող բացասական ազդեցություն չունենալ հաղորդումների քաղաքական հագեցվածության, գեղարվեստական մակարդակի, նյութերի մատուցման վրա:

Անհրաժեշտ էր դիմել գործնական միջոցների...

Բավականին ուշացումով Գերագույն խորհրդի նախագահությունը անվստահություն հայտնելու որոշում ընդունեց, որը, հավանաբար, կառավարությունը կշարունակեր լռելյայն անտեսել, եթե նստաշրջանը չասեր իր վճռորոշ խոսքը:

Եւ այս ամենից հետո. *«Ես ուղղակի չըհասկացվեցի: Մարդիկ գործի մեջ չմտան, միջամուխ չեղան...»:* Բայց մի՞թե կհասներ վերադաս այնքանին, հաշվետվություն տալուն եւ չհասկացվելուն, եթե ղեկավարեր բանիմացորեն, եթե գեթ մեկ անգամ (շուրջ մեկ տարի նախագահելու ընթացքում) թեկուզ հասկացվելու համար կոլեկտիվի ընդհանուր ժողով հրավիրեր, ներկայացներ իր անելիքը, որպեսզի առաջին հերթին կոլեկտիվը «միջամուխ» լիներ նրա «գործի մեջ»:

Ինչպե՞ս... իսկ ո՞վ պետք է նախագահական բարձունքից նայեր ստորադրյալների վրա, ո՞վ պետք է նրանց երեսին ասդեր՝ *«Ես կոլեկտիվի անդամ չեմ, ես կառավարության անդամ եմ»:* Եւ դա վարչակազմի «հրավիրած» եւ նրա իսկ կողմից ձախողած կոլեկտիվի անդրանիկ ընդհանուր ժողովում:

Սակայն կոլեկտիվից խուսափելու առավել կարեւոր դասճառ կար՝ կոմիտեի ղեկավարությունը չուներ «արմատական վերափոխումների» կոնկրետ ծրագիր, լուծարումը իրականացնելու օրինական մեխանիզմներ, ասելիք չուներ: Դա պարզորոշ երեւաց Հայաստանի վարչապետի մոտ այս տարվա մարտին կայացած հանդիպման ժամանակ, որտեղ նախագահի «հարցի քննարկմանը» մասնակցեցին հիմնականում հեռուստառադիոմեկնման ղեկավար աշխատողները Հավանաբար, դա արվեց մարտի 16-ին հրաժարական տված նախագահի վարկը բարձրացնելու նդասակով):

Այն ժամանակ դեռ ուշ չէր, դեռ կարելի էր կանխել կադրային եւ կառուցվածքային սխալ քաղաքականությունը, սակայն հարգվեց «բացառիկ» մտավորականի եւ նրա տեղակալի դահանջը: Երկրակին տրվեցին նոր լիազորություններ: Եւ նրանց իրական գոհերի թիվը սկսեց աճել աղեսալի արագությամբ, լուծարման տակ ընկան չորս գլխավոր խմբագրություններ (տասնյակ աշխատակիցներ): Շարունակվեց կոլեգիայի ընդլայնված նիստի մասնակից այն գլխավոր խմբագիրների եւ ստորաբաժանումների ղեկավարների «մահրումը», որոնք ստորագրել էին Հ. Հովհաննիսյանին անվստահություն հայտնելու հոկտեմբերի 9-ի հանրահայտ որոշումը (թափուր տեղերը անմիջապես համալրվեցին նոր կամակատարներով): Սակայն այս անգամ «իր մարդիկ» էին, իր «թիմն» էր, չնայած նա «անկեղծորեն» դա էլ չի «ընդունում»):

Իսկ մինչ այդ «ազնիվ, շիտակ» մարդը ռամիլիցիայի օգնությամբ դարատադրել էր ռադիոյի ծրագրերի նախկին տնօրենին աշխատանքից ինքնակամ ազատվելու դիմում գրել, իսկ մինչ այդ հեռուստակենտրոնի տնօրենին, փոխտնօրենին, գլխավոր ինժեներին եւ գլխավոր հաշվապահին աշխատանքից ազատելու հրաման էր արձակել միաձայն, բայց ,ձեւակերտել էր կոլեգիայի որոշմամբ):

Սակայն այս անգամ, ինչպես ասում են՝ խոփը քարին դեմ առավ: Հեռուստակենտրոնի կոլեկտիվը դա չհանդուրժելով ստեղծեց գործադուլային կոմիտե, որը դահանջեց նախագահից *«Ֆինանսատնտեսական ստուգմամբ հայտնաբերված ահավոր խախտումների տեղեկանքը ուղարկել դատախազություն փաստերը ստուգելու եւ եթե հանցավոր են նրանց նկատմամբ քրեական գործ հարուցելու»:*

Գործադուլային կոմիտեն հանձնաժողովի «գործերը» համարելով, մեղմ ասած, քերի, դատախազություն ուղարկեց «ահավոր խախտումներ» լրացնող բացատրություն:

Եւ դատախազությունը... սակայն այդ մասին փոքր-ինչ հետո:

Հ. Հովհաննիսյանը հատուկ ընդգծում է. *«...իմ խիղճը հանգիստ է, որ Ֆինանսական այդ ահավոր խախտումների մասին վկայող փաստերի վրա աչքերս չեմ փակել, չեմ կոծկել դրանք...»:* Այդ դեղքում ինչո՞ւ է գործադուլային կոմիտեի վերջնագիրը ներկայացնելուց հետո միայն «գործերն» ուղարկել դատախազություն... որովհետեւ իր տնտեսական գծով տեղակալ Վ. Ղուկասյանի միջոցով հետաքրքրվել է վերոհիշյալ ղեկավարներին ահարեկելու իր աղօրինի հրամանին ենթարկելու նդասակ: Իսկ երբ դա չի հաջողվել, երբ իրենից դահանջել են ուղարկել «գործերը», հանրադեսության դատախազ Ա. Գեւորգյանին հղել է մի գրություն 0.03.91թ.) քաղաքական մեղադրանքով: Գ. Խաչատրյանը, ծանոթանալով ստուգման տվյալներին եւ չվկայաբերելով որեւէ արդարացնող փաստարկ փսկ գրավոր բացատրությունը...), դիմում է դայքարի այդ ինձ համար մասնագիտորեն անաղացուցելի միջոցների՝ հաղորդումների տեխնիկական խզումների:

Ի՞նչ լավ է, որ 37 թվականը չէ, որ փոխվել են ժամանակները):

Հերքվել է եւ այդ «անաղացուցելի» մեղադրանքը՝ համաղատասխան կազմակերպության տեղեկանքներով (*«խզումները»* եղել են էլեկտրաէներգիայի մատակարարումների խափանումների եւ վթարների դասճառով):

«Խիղճը հանգիստ» մարդը դատանությամբ ձեզ համար գլխացավանք կդառնա՝ գրքրնության առիթներ կտա, որն *«իրականացնողի հետ սկզբունքորեն համաձայն»* էիք եւ եք:

«Ազգամիջյան բնամանք», ասելությունն «չքորբոքելու», *«բազմաթիվ ցավալի դեպքերով»* ժողովրդի հոգին չկեղեքելու ձեր «մտահոգությանը» ծանոթ ենք դեռեւս 88-ի փետրվարից, երբ Հայաստանի կոմկուսի կենտկոմի եւ նրա հեռուստառադիոմեկնման դրածո ղեկավարները նույն կերդ քարոզում եւ բարեկամություն էին թմբկահարում, չիրկիզվող դահարաններում փակելով լրագրողների՝ ցեղասպանությունը դատկերող ժաղավենները...

Փոխվել են ժամանակները, սակայն հին «մտածողությունը», ցավոք, մնացել է, որն առավել վտանգավոր է այսօր, երբ արդեն հայաթափվել են Գեղարքունի ենթաշրջանը եւ Հադրութի բազմաթիվ գյուղեր, երբ կենաց ու մահու դայքար է մղվում Շահումյանում, Արցախում, երբ Հայաստանի սահմանամերձ շրջանները վերածվել են ռազմադաշտերի...

Լռե՞նք... թե ընդօրինակելով ձեզ՝ հետեւենք չափի դահդանմանը: Բայց ինչդե՞ս... հարթե՞նք սուր անկյունները եւ մի ողորկ բան հրամցնենք մարդկանց, որդեսզի նրանք «ոչ թե բուլանան», այլ «ամրանա՞ն ոգով»:

Բայց չէ՞ որ ժողովրդի դարավոր փորձով ամրաղնդված ընվզումն է ոգին բարձր դահել, ոչ թե «չափը դահդանելու» խեղճությունը:

«Քաղաքականությունից հեռու» մարդը չդեմք է սանձներ քաղաքական «դոստը», իսկ աշխատանքները ձախողելուց հետո խոհեմություն դեմք է ունենար՝ ժամանակին ազատել «էլեկտրական աթոռը»: Սակայն, ինչդես երեւում է, նման վիճակին այնքան էր հարմարվել, որ չէր բաժանվում «աթոռից» նույնիսկ Գերագույն խորհրդի նախագահության որոշումից հետո, չնայած իր օրինակով բարոյականության դասեր է տալիս Հայկ Մարգարյանին եւ մյուսներին: *«Երբ Գերագույն խորհրդի նախագահը կամ վարչապետն ինձ ավելի շուտ կես խոսք ասեին, որ չեն ուզում աշխատեմ, անմիջապես, առանց բացատրություն դահանջելու կհեռանայի»:*

Հոգու դեմ մեղանչելը նրա համար սովորական է դարձել: Հայկ Մարգարյանի վերաբերյալ ասում է. *«Ես նրան աշխատանքից չեմ ազատել, այլ դաշտոնից»:* Այդ դեղքում ինչդե՞ս հասկանալ դատախազության՝ Հ. Հովհաննիսյանին հասցեագրած գրության (30.07.91 թ.) հետեւյալ տողերը. *«Հ. Մարգարյանին աշխատանքից ազատելու... Ձեր հրամանը դեմք է վերանայվի, քանի որ տվյալ դեղքում կոդիս կերդով խախտվել են Աշխ. օր-ի 38 հոդվածի դահանջները»:* Որդեսզի մեկ անգամ եւս ընդգծի քաղաքական խաղերին զոհ լինելը, նշում է. *«... բոլոր նախարարությունների մեջ սա (հեռուստառադիոմեկնումը) կարգին աշխատող միակ օղակն է»:* Այսինքն՝ ինքը եւ *«բացարձակ էնտուզիազմով աշխատող... 15 հոգին, որոնք մինչեւ ուշ գիշեր մնալով՝ երեւի որակն էին աղահովում»:* Արդա՝ նախագահի աշխատանքային դայմանների ծանրությունը առավել զգալի դարձնելու համար բանձրացնում է գույներ, բերում թվեր, որոնք իրականությանը չեն համադատասխանում. *«Մեր բյուջեն կրճատվեց 7 միլիոնով...»* (Այնինչ, նախորդ տարվա համեմատ ավելացել է 1 միլիոնով): Եւ քանի որ կրճատվել է բյուջեն, ամեն ինչի գները բարձրացել են, տնտեսական ճգնաժամ է... բնականաբար, չդեմք է դահանջեն «կատարյալ հեռուստատեսություն»: Այսինքն, ինքն արել է հնարավորից դեռ մի բան էլ ավելին, բայց իրեն ազատել են:

Ակնկալիք չունենալով հանդերձ նշել «ազատվող», «հեռացվող» նախագահի քիկունին չկանգնելու հանգամա՞նքը... դա ոչ թե դահանջում, այլ վատակում են եւ առաջին հերթին մարդկանց հանդեղ ցուցաբերած ուրացավ վերաբերմունքով:

«Աշխարհի բանը» մտածելիս փորձեք մտովի եւ դառնալ եւ վերջին մեկ տարվա ճանադարհն անցնել սթափ, անաչառական վերհիշելով անցած-գնացած դեղքերը, դեմքերը: Գուցե այն ժամանակ դահանջ կզգաք նոր խոսովանության...

Ռոբերտ ՄԻՐԶՈՅԱՆ
Ռադիոյի եւ հեռուստատեսության հաղորդումների հատուկ թղթակից

digitised by A.R.A.R.@

Քաղաքական ուժերի նոր տեղաբաշխումը Թուրքիայում

«Ազգ»ը, նախորդ համարում անդրադառնալով հոկտեմբերի 20-ին Թուրքիայում կայացած Մեջլիսի վաղաժամկետ ընդհանուր ընտրություններին, ընթերցողին ծանոթացրել էր նախնական տվյալների հետ: Չնայած ընտրությունների վերջնական արդյունքները (որոնք հայտնի դարձան միայն այն ժամանակ, երբ թերթի տվյալ համարն արդեն տրոմարանում էր), որեւէ զգալի փոփոխություն քաղաքական ուժերի հարաբերակցությանը Մեջլիսում չեն մտցրել, այնուամենայնիվ, նպատակահարմար ենք գտնում ճշգրտել նախորդ համարի տեղեկությունները:

Ուրեմն, վերջին տվյալներով, ընտրություններին մասնակցել են 29.830.404 ընտրողներից 25.203.515-ը, որը համապատասխանում է ընտրողների ընդհանուր թվի 84.4 տոկոսին: Ընտրողների քվեներն ու դրան համապատասխան պատգամավորական տեղերը Մեջլիսում կուսակցությունների միջեւ տեղաբաշխվել են հետեւյալ կերպ.

Դեմիրելի *Ճշմարիտ ուղի* կուսակցություն, 6.601.353 ձայն, 178 տեղ.

Յըլմազի *Մայր հայրենիք* կուսակցություն, 5.862.866 ձայն, 115 տեղ.

Ինյոնյուի *Սոցիալ-դեմոկրատական ժողովրդական* կուսակցություն, 5.065.028 ձայն, 88 տեղ.

Էրբաքանի *Բարօրության* կուսակցություն, 4.124.716 ձայն, 62 տեղ.

Էջեվիթի *Դեմոկրատական ձախակողմյան* կուսակցություն, 2.630.352 ձայն,7 տեղ:

Այսպիսով, վերոհիշյալ կուսակցություններն, այդ թվում նաեւ պատգամավորական թեկնածուներին Բարօրության կուսակցության ցուցակներում ներկայացրած Թյուրքեշի Ազգայնական աշխանհային կուսակցությունը, Մեջլիսում տեղեր ստացան: Իսկ ինչ վերաբերում է Դողու Փերինչեքի Սոցիալիստական կուսակցությանը, արդա նա ջախջախիչ պարտություն կրեց: Հատկանշական է, որ ընտրությունների նախօրյակին *«Թուրքիայի տարածքում բոլոր առանձին պետականություն ստեղծելու»* ծրագրով հանդես եկող Սոցիալիստական կուսակցությունը աջակցություն չստացավ նույնիսկ երկրի բդաքնակ հարավ-արեւելյան շրջաններում: Ընտրություններն իրենց արդյունքով մեծ հիասթափություն պատճառեցին Սոցիալ-դեմոկրատական Ժողովրդական եւ Դեմոկրատական ձախակողմյան կուսակցություններին: Դրանցից վերջինը, ըստանալով ընտրողների ձայների ընդհանուր թվի 10.7 տոկոսը, «ընտրական օրենքի» պատճառով 45-ի փոխարեն Մեջլիսում ձեռք բերեց ընդհամենը դեպուտատական 7 տեղեր: Փաստորեն, Էջեվիթի կուսակցությունը, իր մասնակցությամբ երկընտրանքի մեջ դնելով ընտրողներին, ընտրություններում խլեց Սոցիալ-դեմոկրատական Ժողովրդական կուսակցության ձայների զգալի մասը: Այդ առումով պատահական չէ, որ Էրդալ Ինյոնյուն ընտրությունների նախօրյակին մեկ կուսակցության մեջ միավորվելու առաջարկով համառորեն դիմում էր Էջեվիթին:

Ընտրությունների անհաջող ելքը կառավարող Ճշմարիտ ուղի կուսակցության համար բերեց օրինաչափ պետք է համարել: Տվյալ կուսակցությունը 1983 թվականի ընտրություններին ստացել էր ձայների ընդհանուր թվի 44 տոկոսը, 1987-ին՝ 36 տոկոսը, իսկ վերջին ընտրություններում այդ թիվը նվազեց մինչեւ 24 տոկոս: Վերոհիշյալ փաստերի լույսի տակ կարող ենք ասել, որ վաղաժամկետ ընտրության մասին որոշում կայացնելով՝ Մեսութ Յըլմազը պարզապես Մայր հայրենիք կուսակցության դիրքերի հետագա թուլացումը կանխելու, այսպիսով մինչ այդ 1992 թվականին նախատեսվող ընտրություններում ավելի մեծ պարտությունից խուսափելու, կուսակցության ներսում ծայր առած երկպառակությունները հաղթահարելու փորձ արեց: Այլ կերպ ասած, նա իշխանությունից հեռացավ նրվազագույն կորուստներով: Նրա տեսանկյունից մխիթարանք պետք է համարել այն, որ ընտրությունները մրցակից կուսակցություններից ոչ մեկին միակուսակցական կառավարություն կազմելու հնարավորություն չեն տալիս:

Է. Ինյոնյու եւ Ս.Դեմիրել

Ընտրությունները իրենց արդյունքներով, բացառությամբ Էրբաքանի Բարօրության կուսակցությանը, որը նախորդի համեմատ երկնակի թվով ձայներ էր ստացել, չեն գոհացնում ոչ մի կուսակցության: Ճիշտ է, Դեմիրելի Ճշմարիտ ուղի կուսակցությունը Մեջլիսում ստացած տեղերի քանակով գերազանցում է մյուսներին, սակայն նա կանգնած է կոալիցիոն կառավարություն կազմելու խնդրի առաջ: Թուրքիայում հիմա ուշի ուշով հետեւում են, թե Դեմիրելը նման առաջարկով որ կուսակցությանն է դիմելու: Ի դեպ, նշենք, որ դեռ հոկտեմբերի 21-ին Յըլմազը հանդես եկավ հայտարարությամբ, պարզորոշ նշելով, թե իր կուսակցությունը չի ցանկանում կոալիցիայի անդամ դառնալ: Նպատակահարմար չի համարվում նաեւ նման առաջարկով դիմել Էրբաքանին եւ նրա կուսակցության հետ Մեջլիսում ներկայացվող Թյուրքեշի կուսակցությանը, քանի որ ազգայնական ճակատի կոալիցիոն կառավարություն Թուրքիայում վերջիններիս մասնակցությամբ ստեղծվել էր 70-ական թվականներին եւ մատնվել անհաջողության: Կհամաձայնի՞ արդյոք Ինյոնյուն մտնել Դեմիրելի հետ կոալիցիայի մեջ: Չէ՞ որ կառավարության հաջողություններ կամա-ակամա վերագրվելու են երկու մրցակիցներից Ճշմարիտ ուղի կուսակցությանը, իսկ Ինյոնյուի կուսակցությունը տվյալ դեպքում կամավոր համաձայնելու է երկրորդականի իր դիրքի հետ: Թերեւս այս բարդություններն են, որ թուրք քաղաքական գործիչներին դեռ այսօրվանից ստիպում են խոսել առաջիկա մեկ-երկու տարում նոր ընտրությունների անցկացման անհրաժեշտության մասին: Սակայն ինչպիսի ընթացք էլ ունենան իրադարձությունները, պարզ է, որ Թուրքիան տնտեսական եւ քաղաքական լուրջ դժվարությունների առաջ է կանգնած: Ամսական շուրջ 70 տոկոսի հասնող, բացի աշխատավորներից ու կայուն եկամուտ ունեցող ծառայողներից, նաեւ ձեռնարկատերերի մոտ մեծ դժգոհություն առաջացնող դրամի արժեզրկումը, ահաբեկչությունը, բացահայտ բնույթ ստացած քրդական պայքարի խնդիրներն ու մարդու իրավունքները, ինչպես նաեւ Կիպրոսի հարցի առնչությամբ Արեւմուտքի եւ ԱՄՆ-ի կողմից Թուրքիայի վրա գործադրվող ճնշումները կառավարությունից լուծումներ են պահանջում: Կառավարության փոփոխությամբ կարեւոր նշանակություն է ձեռք բերում նաեւ երկրում միանձնյա իշխանության մեջ մեղադրվող Օզալի ու նոր վարչապետի փոխհարաբերությունների հարցը:

Սուլեյման Դեմիրելի առաջ կանգնած խնդիրները, հիրավի, չափազանց բարդ են: Սակայն թուրք ընտրողների գոնե զգիսակից խավը այն կարծիքին է, որ երկրում խնդիրների լուծումը կառավարության գործն է: Իր ձեռքում կենտրոնացնելով պետական իշխանության լծակները, ունենալով նաեւ ամբողջական ինֆորմացիա այս կամ այն հարցի մասին, իշխանության գլուխ կանգնած կառավարությունը կամ լուծում կգտնի դրանց հաղթահարման համար, կամ էլ կբողնի կիեռանա՝ ասպարեզը զիջելով նրանց, ովքեր ի վիճակի կլինեն կողմնորոշվել նման պարագաներում:

Դավիթ ՀԱՍԲԵՏՅԱՆ

Արդարությունը հաղթանակեց

24 տարի անց արդարությունը, այնուամենայնիվ, հաղթանակեց: Այսպես բնութագրեց խորհրդա-իսրայելյան դիվանագիտական հարաբերությունների լայնամասշտաբ վերականգնումը Խորհրդային Միությունում Իսրայելի պետության դեսպան Արյե Լեւինը: *«Դիվանագիտական համայնապատկեր»*-ին տված հարցազրույցում նա նշեց, որ այդ քայլն աշխարհում դրական փոփոխությունների խորհրդանիշն է, որը դասվում է այնպիսի գործընթացների շարքին, ինչպիսիք են զինաթափումն ու միջազգային լարվածության թուլացումը: Այդ գործընթացները, Ա. Լեւինի կարծիքով, հիմնավորեցին Իսրայելի հետ 1967թ. Մոսկվայի կողմից խզված դիվանագիտական հարաբերությունների վերականգնումը:

Խորհրդա-իսրայելական դիվանագիտական հարաբերությունների վերականգնումը Ա. Լեւինն անվանեց որպես Մերձավոր Արեւելքի կարգավորման գործում Մոսկվայի կարեւոր ներդրում: Նա հույս հայտնեց, որ հիմա, լավ հարաբերություններ ունենալով եւ Իսրայելի, եւ արաբ հարեւանների հետ , Խորհրդային Միությունն ի վիճակի կլինի «դրական դեր» խաղալ Մերձավոր Արեւելքի կարգավորման մադրիդյան համաժողովի եւ իսրայելա-արաբական ուղիղ բանակցությունների ընթացքում:

Ինչ վերաբերում է զուտ խորհրդա-իսրայելական հարաբերություններին, ապա, ինչպես զգնում է Լեւինը, առկա են լավ հեռանկարներ նրանց զարգացման համար: Իհարկե, ամեն ինչ միանգամից չես անի: Նախ եւ առաջ անհրաժեշտ է ավելի լավ ճանաչել միմյանց: Իսրայելը շատ դինամիկ, զարգացած երկիր է՝ բազմաթիվ խորհրդային գաղթականներով: Ա. Լեւինի խոսքերով, *«պետք չէ անտեսել այս ամենը»*: Նա համոզվածություն հայտնեց, որ միաժամանակ կվերականգնվեն մարդկային, տնտեսական, գիտական եւ մշակութային կապերը Խորհրդային Միության եւ Իսրայելի միջեւ: Դրա համար, նրա կարծիքով, կան բոլոր հիմքերը: Այն հարցին, թե կնպաստի դիվանագիտական հարաբերությունների վերականգնումը խորհրդային հրեաների՝ Իսրայել գաղթի պարզեցմանը, Ա. Լեւինը պատասխանեց, որ արտագաղթի ռեժիմն արդեն իսկ հիմա բավականին լիբերալ է: Նա դրականորեն գնահատեց Խորհրդային Միության՝ վերջին տարվա ընթացքում այդ խնդրի վերաբերյալ ցուցաբերվող մոտեցումը: Դրա հետ մեկտեղ, դեսպանը հույս հայտնեց, որ այսուհետ արտագաղթը տեղի կունենա *«ուրիշ, ավելի բարենպաստ պայմաններում»*:

Ինչ վերաբերում է խորհրդային ինքնիշխան հանրապետություններում հյուպատոսարաններ բացելու հնարավորությանը, ապա Լեւինը հիշեցրեց, որ դեռ 1990թ.-ին (երբ հաստատվում էին հյուպատոսական հարաբերությունները երկու երկրների միջեւ) Իսրայելը հայտարարեց այդ քայլի անհրաժեշտության մասին: Այն ժամանակ խորհրդային կողմից ոչ մի էական առարկություններ չկային: Իսրայելի դեսպանը ենթադրեց, որ հյուպատոսությունները կբացվեն արդեն իսկ մոտ ապագայում: Նրա կարծիքով, դրանք կարող են բացվել *«արեւմուտքում, օրինակ, Կիեւում, եւ արեւելքում՝ Միջին Ասիայի հանրապետություններում»*: Այդ շրջանում բնակվում են բազմաթիվ հրեաներ, որոնք Իսրայելի հյուպատոսական օգնության կարիքն են զգում: Հիմա Իսրայելի վիզա ստանալու համար նրանք ստիպված են հատուկ գալ Մոսկվա, ինչը, բնականորեն, կապված է «մեծ դժվարությունների» հետ: Ա. Լեւինը հիշեցրեց, որ միայն անցյալ տարի Իսրայել մեկնեցին 184 հազար խորհրդային հրեաներ: Այս տարի, նախնական հաշվումներով, նրանց օրինակին կհետեւեն եւս մոտ 140 հազար մարդ:

Բացի այդ, կան եւ ուրիշ, այդ թվում տնտեսական եւ առեւտրի հետ կապված նկատառումներ, որոնք դրդում են Իսրայելին իր հյուպատոսությունները բացել խորհրդային ինքնիշխան հանրապետություններում: Ա. Լեւինը հասկացրեց, որ հանրապետությունների կողմից պետական անկախություն ձեռք բերելու դեպքում, *«հարաբերությունները նրանց հետ կարող են վերափոխվել»*:

Ա. Լեւինը խոստովանեց, որ այժմ նախապատրաստվում է բացել ավիահաղորդագրություն Մոսկվայի եւ Երուսաղեմի միջեւ: *«Քաղաքական նկատառումները, որոնք խոչընդոտում էին դրան մի քանի ամիս առաջ, արդեն չկան, եւ ճանապարհը ազատ է»*, նշեց Իսրայելի դեսպանը:

Հայաստանն անջրպետ է Թուրքիայի եւ...

Լոնդոնում հրատարակվող *«Ջեյհան»* շաբաթաթերթը հատկապես Խորհրդային Միության վերջին իրադարձություններից հետո հաճախ է անդրադառնում իրանա-խորհրդային հարաբերություններին եւ արտահայտում իր մտահոգությունն այն կապակցությամբ, որ Իրանը անկախության համար ծավալվող շարժման նկատմամբ չեզոք դիրք է գրավում: Թերթի էջերում Իրանի ղեկավարների հասցեին հաճախ հնչում են կոշտագույն խոսքեր: Ներկայացվող հոդվածը դրվագաբար բարգմանվել է «Ջեյհանի» հոկտեմբերի 10-ի համարից:

«Խորհրդային Միության փլուզման շարունակվող գործընթացը քաղաքական եւ ռազմավարական լուրջ հետեւանքներ է խոստանում Իրանին: Իրանի եւ Խ. Միության ընդհանուր սահմանների գերակշռող մասը բաժին է ընկնում միջինասիական եւ կովկասյան հանրապետություններին: Խորհրդային հանրապետությունների եւ Իրանի միջեւ կան նաեւ պատմա-մշակութային ընդհանրություններ: Միջին Ասիան եւ Կովկասը երկար տարիներ կազմել են Երբեմնի հզոր Իրանի մի մասը: Տաջիկստանում խոսում են պարսկերեն, այդ հանրապետության ազգաբնակչությունը մտադիր է հրաժարվել կիրիլյան տառատեսակներից եւ օգտագործել արաբատառը: Դա իրանական մշակույթի տարածման վառ օրինակ է:

Ուզբեկստանի խոշորագույն քաղաքները Սամարղանդը եւ Բուխարան, համարվել են պարսկական պոեզիայի զարգացման եւ տարածման կենտրոնը:

Խ. Ադրբեջանի ժողովուրդը ավելի շատ հակված է Իրանին, քան ռուսաբնակ հանրապետություններին: Ուստի, Իրանը պատմության այս ճակատագրական ժամանակահատվածում կարող է դառնալ անկախացող ժողովուրդների մշակութային վերածննդի ոգեշնչողը: Մյուս կողմից, Իրանն այդ հանրապետությունների եւ միջինարեւելյան երկրների միջեւ կապող օղակ է հանդիսանում: Այդ շրջանի բրախոս ազգաբնակչության եւ Թուրքիայի միջեւ, ի դեմս Հայաստանի, անջրպետ է գոյացել: Իսկ հարավում տարածվում է Աֆղանստանը, որը մշակութային, կրոնական եւ տնտեսական առումով չի կարող հույսի աղբյուր հանդիսանալ անկախացող հանրապետությունների համար:

Այսպիսով, Իրանը, կամ նոր Իրանը այդ ժողովուրդների եւ մյուս երկրների միջեւ հիանալի կամուրջ կարող է հանդիսանալ: Սակայն Իրանի ղեկավարները, չունենալով բավարար ուժ ու շրջահայաց քաղաքականություն, ի վիճակի չեն ստեղծված խառնակ իրավիճակը ծառայեցնել երկրի շահերին»:

Գրիգոր ՍՈՍՔԵԼՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Արքայադուստրը չի կորցնում հույսը

16 տարեկանում նա դարձավ Մոհամմեդ Ռեզա Փեհլեւիի՝ Իրանի շահի կինը: Յոթ տարի անց, արքունիքի ճնշմանը տեղի տալով՝ շահը բաժանվեց նրանից: Պատճառը՝ Սորայան չէր կարող թագաժառանգ ծնել: Բաժանումից 33 տարի անց արքայադուստր Սորայան գրեց *«Միայնության դղյակը»* գիրքը: Գրքի տպագրության նախօրյակին նա արտազրույցի համաձայնություն տվեց, որն էլ ներկայացվում է ստորեւ:

- Ինչպե՞ս դպատահեց, որ դուք այդքան երիտասարդ տարիքում հայտնվեցիք շահի պալատական դղյակում:

- Այն ժամանակ հորաքրոջս եւ նրա որդիների հետ ես ապրում էի Լոնդոնում, սովորում էի անգլերեն, քանի որ երազում էի ԱՄՆ-ում կինոաստղ դառնալ: Մեր տիրակալին՝ շահին, գիտեի միայն Մոհամեդի եւ դպրոցում եղած լուսանկարից: Մի անգամ հորաքրոջս տղան թույլտվություն խնդրեց ինձ լուսանկարելու համար: Ես համաձայնեցի, առանց իմանալու, որ այդ լուսանկարները նախատեսված էին շահի մոր՝ Թաջ ալ-Մոլուքի համար: Շահն այդ ժամանակ նոր էր բաժանվել Ֆաուզիայից՝ թարուկ արքայի դուստրից: Մեկ շաբաթ անց, երբ ես շահի քրոջ հետ զտնվում էի Փարիզում, հայրս հեռաձայնեց եւ հայտնեց, որ շահը հետաքրքրությամբ է ծանոթացել իմ լուսանկարներին եւ խնդրել է ինձ այցելել պալատ:

- Եվ դուք մտածեցիք, որ եկել է հեքիաթային երազների իրականացման ժամանակը:

- Ոչինչ էլ ես չմտածեցի: Ես ընդամենը 16 տարեկան միամիտ ու պարզասիրտ աղջիկ էի: Ուզում եմ հիշեցնել, որ հայրս Բախտիարների ընտանիքի ցեղից էր: 1925 թ. Ռեզա շահ Փեհլեւին իր իշխանության ամրապնդման եւ կենտրոնացված պետականության ստեղծման համար ամբողջությամբ վերացրեց մի քանի ցեղեր: Բայց դժվարամատելի լեռներում ապրող Բախտիարների հետ նա չկարողացավ լուծել իր հաշիվները: Իսկ նրանք տիրում էին ահռելի նավթարտադրամասերին, եւ Մոհամմեդի հորը ամենքով անհրաժեշտ էր դրանք ձեռք գցել:

Նրան հաջողվեց ձերբակալել հորեղբայրներիս եւ նրանց սպիտել չնչին գնով վաճառել մեզ պատկանող հողերը: Այդ դեպքերից հետո Փեհլեւիները սկսեցին զգուշանալ Բախտիարներից: Մոհամմեդ Ռեզա Փեհլեւիի համար նրանց որդես դաշնակից ունենալը հույժ կարեւոր էր:

- Ուրեմն, դուք կարծո՞ւմ էիք, որ շահը ձեզ հետ ամուսնանում է հենց այդ նպատակով:

- Իհարկե ոչ, ոչ մի նման բանի մասին ես այն ժամանակ չէի մտածում: Ուղղակի վերադարձա Թեհրան: Դեռ չէի հասցրել ճամպրուկներս բացել՝ շահի մորն այցելելու հրավեր ստացա: Գրկախառնություններ, համբույրներ: Շուտով հայտնվեց ինքը՝ շահը, իրանական բանակի գեներալի տոնական շքեղ համազգեստով: Ինչպես գրում են սիրային վեպերում՝ սերը հորդեց առաջին իսկ հայացքից: 1951 թ. փետրվարին ես դարձա շահի կինը:

- Ինչպե՞ս էր անցնում ձեր կյանքը արքայից արքայի դղյակում:

- Աշխարհական մարդկային հարաբերություններն այստեղ անհնարին էին: Ոսկեջրած վանդակ, իսկ նրա ներսում՝ նախանձ, ատելություն, քենամանք: Չգիտեմ, թե ինչու ամուսնուս մայրն ու քույրերն ինձ չսիրեցին, ավելի ուշ քենամարտ էին վերաբերվում: Անվերջանալի ճաշկերույթներին ու ընթրիքներին ես ինձ օտարերկրացու նման էի զգում: Որոնցի մի քիչ հանգստանամ այդ ամենից, անջատվեմ պալատական տաղտուկ կյանքից, այցելում էի հիվանդանոցներ, մանկատներ, աղքատների թաղամասեր: Երբ իշխանությունը զավթեց Մոսադդեղը, մենք փախանք Իրաք, վտարանդու կյանքով ապրեցինք Իտալիայում: Հետո հաղթական ու փառքով վերադարձանք հայրենիք:

Թվում էր, ամեն ինչ արդեն կարգին է, բայց ես չէի հղիանում: Եղա Եւրոպայի եւ Ամերիկայի լավագույն մասնագետների մոտ, բայց իզուր: Իսկ պալատում, սկսարոջս խրախուսանքով, սկսեցին շշուկներ շրջել. *«Ինչու՞ նա չի ցանկանում մեզ շնորհել մի թագաժառանգ»:* Ես անընդհատ զգում էի ինձ վրա ուղղված համառ հայացքներ, որոնք ուսումնասիրում էին, արդյոք չի՞ կրկնացել իմ որովայնը: Պալատականների քննամանքը օր օրի աճում էր, այդ ամենը անտանելի էր դառնում: Իսկ շահը: Նա առաջվա պես սիրում էր ինձ: Նույնով պատասխանում էի նրան: Չէ՞ որ մենք նրա հետ հազար ու մի փորձություն էինք տարել, իսկ դրանք ամրացնում են ընտանիքը: Կարծում եմ, եթե չլիներ այդքան մարդկանց ճնշումը, մեր համբերությունը կհերիքեր երեխա ունենալու համար: Չէ՞ որ բոլոր ախտորոշումները ցույց էին տալիս, որ ես ընդունակ եմ երեխա ունենալու:

- Ի՞նչը ստիպեց շահին զիջել պալատականների ճնշմանը եւ արագացնել ձեր մեկնումը:

- Ես առաջինն ասացի, որ պետք է լքեմ իրեն: Շահն առաջարկեց ինձ այլ տարբերակ, որը նախատեսված է թե մուսուլմանական, թե իրանական օրենքով. նա ժամանակավորապես ամուսնանում է մի կնոջ հետ, որից թագաժառանգ ունենալուց հետո անմիջապես բաժանվում է դրանից: Դաստիարակված լինելով եւրոպական ոգով՝ ես չէի կարող դա թույլ տալ: 58-ի փետրվարին ես հեռացա Թեհրանից: Մի ամիս անց շահը հայտարարեց մեր բաժանման մասին, իսկ հաջորդ տարվա դեկտեմբերին ամուսնացավ Ֆարա Դիբայի հետ:

- Նրա մտքով երբեք չի՞ անցել գահից հրաժարվել: Չէ՞ որ երբ սիրում ես...

- Կարծում եմ՝ երբեք: Գահը նրա համար ամեն ինչից բարձր էր:

- Եվ այսպես, բաժանում... Ի՞նչ եղավ հետո:

- Ես ոչ մի կերպ չէի կարողանում ուշի գալ: Մոռանալու համար ճանապարհորդում էի մոտս ուղեկցությամբ: Մի անգամ, չեմ էլ հիշում որտեղ, որոշեցի զբոսնել փողոցում: Երկար տարիների ընթացքում առաջին անգամ էի մենակ զբոսնում: Եւ այդտեղ հասկացա, որ քայլելը մոռացել եմ, անընդհատ ընդհարվում էի անցորդների հետ: Չէի կարողանում ամբոխի մեջ կողմնորոշվել, հեռաձայնել հեռախոս-ավտոմատից, օգտվել վերելակից: Արքունիքում այդ ամենը անում էին իմ փոխարեն: Օրինակ, այնտեղ ինձ արգելվում էր թեյ լցնել, գրքերը դրամ ունենալ: Թեհրանից իմ հեռանալուց հետո բավական երկար ժամանակ անցավ, մինչեւ ես ինձ կարողացա նորմալ մարդ զգալ: Իսկ հետո եկավ երկրորդ մեծ սերը. ռեժիսոր Ֆրանկո Ինդովանիան, որն ինձ նկարահանեց իր կինոնկարում: Երջանկության՝ ու ժպիտների հինգ տարի: Հինգ տարի, որ վերջացան Սիցիլիայի մոտ տեղի ունեցած ավտովթարով...

- Ինչպե՞ս եք ապրում հիմա:

- Շատ եմ ճանապարհորդում: Իզուր չէ, որ ես ծնունդով քոչվորական ցեղից եմ:

Երջանիկ եմ ընկերներիս հետ: Հաճախ մեկնում եմ Փարիզ՝ գնումների համար: Սիրում եմ պարել: Եվ հույս ունեմ հանդիպել մարդու, որը կսիրի ինձ, իսկ ես՝ նրան...

- Շահը ձեզ մեծ կյանք է բողել:

- Ամենամեծ հարստությունը արքայադստեր կոչումն է, որը նա է ինձ շնորհել: Մնացածն էական չէ:

Մանեթի, Ռիո դե Ժանեյրո

ՄԱՐԶԱԿԱՆ

Միշել Պլատինի. վերադառնալ ֆուտբոլային էթիկային

Թողնելով մեծ ֆուտբոլը՝ նա կարճ ժամանակում շուտափելի հաջողություններ հասավ նաեւ մարզչական բնագավառում: Ուստիր 3 տարի է, ինչ անվանի ֆուտբոլիստը գլխավորում է Ֆրանսիայի հավաքականը, որը վերջին 2 տարում ոչ միայն պարտություն չի կրել, այլեւ եւրոպայի առաջնության ընտրական խմբի մրցաշարում, անցկացրած բոլոր 7 հանդիպումներում առավելության հասնելով մրցակիցների նկատմամբ, ժամկետից առաջ գրավել է առաջին տեղը եւ առաջինը

իրավունք ստացել մասնակցելու գալիք ամանը Շվեդիայում կայանալիք եւրոպայի առաջնության եզրափակիչին: Պլատինին ծնվել է 1955 թ. հունիսի 21-ին, խաղացել է Ֆրանսիայի **«Նանս»**, **«Սենթ Էթիեն»**, Իտալիայի **«Յուվենթուս»** հանրահայտ թիմերում: Միշել Պլատինին նրբագեղ ֆուտբոլիստ էր, նրա խաղը մի իսկական պոեզիա էր:

Ստորեւ ձեր ուշադրությանն ենք ներկայացնում ֆրանսիական ֆուտբոլային **«Օնզ»** ամսագրում հրապարակված հարցազրույցը Միշել Պլատինիի հետ:

Օ.- Արդեն 3-րդ տարին է, ինչ մարզում եք նույն թիմը: Ինչպիսի՞ն են արդյունքները:

Պ.- Համակրելի թիմ է, որն արդյունքի «ֆաղց» է զգում եւ որի համար պատրաստ է ամեն: Հավաքականն իր կազմով առաջադիմելու է: Ես հատկապես կառանձնացնեի Բեռնար Պատոյին՝ փ դեմ, վերջինիս մայրն ազգությամբ հայ է: Այդ մասին «Ազգը» մանրամասնորեն գրել է- Ս. Բ.), որն աչքի է ընկնում հաջողությամբ ու կատաղությամբ եւ թիմի դիրիժորն է: Ֆիզիկապես մենք երբեք չենք զիջել մրցակիցներին: Այն օրը, երբ մենք այդ բոլորին ավելացնենք նաեւ լավ տեխնիկա, ապա շատ ուժեղ թիմ կդառնանք:

Օ.- Ձեր խմբի հիմնական ուժը միասնությո՞ւնն է:

Պ.- Խմբի միասնություն, ասել է թե հասնել բարձր արդյունքների: Դա կարեւոր է, բայց ոչ որոշիչ: Գլխավորն անհատական եւ կոլեկտիվ խաղի համադրությունն է:

Օ.- Ձեր խումբը փա՞կ է:

Պ.- Երբեք: Ես իրավունք չունեմ մտածել, որ ինչ որ մեկն առավելություն ունի մյուսի նկատմամբ: Ինձ հետ ոչ մի ընկերակցություն չկա, հակառակ դեպքում ես կխաղացնեի Տիգանային, Բաստիստոնին, Ֆերնանդեսին:

Օ.- Ամեն դեպքում այն շատ բաց էլ չէ...

Պ.- Համենայնդեպս, իմ մարզումներն ընկսելուց ի վեր ես վերցրել եմ 23 կամ 24 մարզիկ: Սա խումբ է, որ զարթնք է ապրում:

Օ.- Դուք ընտրո՞ւմ եք նոր աչքի ընկնող խաղացողներ:

Պ.- Ներկայիս խումբը կխաղա մինչեւ 92 թիվը: Բայց 92-ին «տարիքավորները» կթողնեն մարզադաշտը երիտասարդներին:

Օ.- Ինչպիսի՞ ընկերական հանդիպումներ են նախատեսվում:

Պ.- Փետրվարին «Ուեմբլիում» կխաղանք Անգլիայի հավաքականի հետ, մարտին Ֆրանսիայում՝ բելգիացիների: Ես չեմ սիրում ֆուտբոլիստներին մոբիլիզացնել եւրոպայի գավաթների խաղարկության ընթացքում: Մայիսի վերջին կհանդիպենք Ավստրիայի հավաքականի հետ:

Օ.- Ֆրանսիական ֆուտբոլը համատեղում է լավ արդյունքներն ու ֆինանսական ճգնաժամը: Չե՞ք կարծում, որ սկսված ճգնաժամը կարող է խանգարել այդ վերելքին:

Պ.- Ակումբները հիշ միջոցներ ունեն, դա ճշմարիտ է: Բայց եւրոպայի գավաթի համար որակավորված լավագույն թիմերին միշտ էլ կօգնի հովանավորական դրամը: Հիմա յուրաքանչյուրը պետք է գործի ղնի իր հնարավորությունները: Այն օրը, երբ մեր ֆուտբոլը կդառնա տնտեսապես ապահովված, մարդիկ նոր դրամ կներդնեն դրա համար:

Օ.- Պրոֆեսիոնալ ակումբներն ու Ֆրանսիայի հավաքականը հակասական գաղափարներ ունե՞ն:

Պ.- Ամեն մի պրեզիդենտ պաշտպանում է իր ակումբը, ես՝ Ֆրանսիական ֆուտբոլը:

Օ.- Էլ ի՞նչ կուզենայիք փոփոխել:

Պ.- Իմ կարծիքով, լավ կլինի 16 խաղացող դուրս բերել ասպարեզ: Դա տեխնիկներին ընտրության ավելի մեծ հնարավորություն կտա:

Օ.- Ակումբներն ընդառաջ են գնում եւրոպայի առաջնությանը:

Պ.- Այդ տեսակետից, այս անգամ արդեն երեւի չլինեն ազգային թիմեր: Ակումբները, որոնք կխաղան այդ սուպերչեմպիոնատում, կգնեն Ֆրանսիական լավագույն խաղացողներին...

Օ.- Այս տեսակետից դուք համաձայն չե՞ք Bernard Tapie-ի հետ:

Պ.- Այո, համամիտ եմ:

Օ.- Ի՞նչն է ձեզ համար դրական կամ բացասական «Օլիմպիկ»-ի պրեզիդենտի գործելակերպում:

Պ.- Նա ճնշում է գործադրում խաղացողների վրա: Այսօր նա միանում է այն գաղափարներին, որոնք ես պաշտպանում էի վաղուց: Դրա համար էլ ես որոշ հարցերում համաձայն եմ նրա հետ:

Օ.- Ի՞նչ սպասելիքներ ունեք ապագայում:

Պ.- Պետք է զգոն լինել: Ֆուտբոլը խաղ է, այն 300-400 միլիոն մարդկանց հաճույքն է: Պետք է վերադառնալ ֆուտբոլային էթիկային:

Օ.- Ղեկավարներն ունե՞ն բոլոր իրավունքները:

Պ.- Խաղացողները ոչինչ չեն կարող ասել: Կան ղեկավարներ, որոնք որոշում են բոլոր հարցերը: Իրականում, մարզիկները տեղյակ չեն պրոբլեմներին: Նրանց ասում են պատրաստվել, լավ խաղալ... եւ ոչ թե հարցեր տալ:

Օ.- Դուք ընդգրկված եք ՖԻՖԱ-ի մի հանձնաժողովում: Ինչո՞վ եք զբաղվում:

Պ.- Մենք ցանկանում ենք տեսնել, թե ինչպես կարող է զարգանալ համաշխարհային ֆուտբոլը:

Օ.- Ձեզ հետաքրքրո՞ւմ է ղեկավարի կարիերան:

Պ.- Ես, ճիշտն ասած, չգիտեմ, որտեղ է իմ ապագան... Ամենից առաջ կա կյանք, ընտանիք, բարեկամություն, հաճույք: Այստեղ ես ապրում եմ արտակարգ բոլորներ: ■

ԽՍՀՄ առաջնություն
Առաջին խումբ
40-րդ տուր
«Կոտայք»-ի նահանջը շարունակվում է

Ֆուտբոլի ԽՍՀՄ առաջին խմբի առաջնության արտագնա հերթական երկու հանդիպումներում էլ «Կոտայք»-ը չիախտեց տրհած ավանդույթը: Մեր թիմը Նամանգանում 0:2 հաշվով զիջեց «Նովբախոր»-ին, ապա Ֆերգանայում 1:2 հաշվով պարտություն կրեց տեղի «Նեֆթյանիկ»-ից: «Կոտայք»-ի նահանջը շարունակվում է, եւ գործնականում այլեւս դժվար թե կարողանա պահպանել իր տեղն առաջին խմբում:

Վիճակագիրների համար

«Նովբախոր» - «Դինամո» Us. 2:0
«Շիննիկ» - «Տիլիգուլ» 2:1
«Լոկոմոտիվ» - «Տավրիա» 1:0
«Նեֆթչի» - «Կուբան» 5:1
«Դինամո» Սխ. - «Ռոստսելմաշ» 2:0
«Ուրալմաշ» - «Ռոտոր» 1:0
«Գեոլոգ» - «Կայրաթ» 0:0
«Ֆակել» - «Բուկովինա» 2:0
«Տեքստիլշչիկ» - «Զիմբրուլ» 2:0

Հոկտեմբերի 26-ի դրությամբ

	Խ	հ	ո	պ	գ	մ
1. Ռոտոր	38	21	11	6	67-37	53
2. Ուրալմաշ	38	19	8	11	57-34	46
3. Տիլիգուլ	37	19	8	10	54-39	46
4. Տավրիա	37	19	7	11	59-47	45
5. Ռոստսելմաշ	38	17	10	11	41-32	44
6. Տեքստիլշչիկ	38	15	13	10	52-44	43
7. Լոկոմոտիվ	38	15	12	11	44-35	42
8. Նեֆթյանիկ	38	18	5	15	47-49	41
9. Նովբախոր	38	17	7	14	54-48	41
10. Բուկովինա	37	17	7	13	50-45	41
11. Ֆակել	38	16	7	15	39-42	39
12. Դինամո Սուխ.	38	15	9	14	40-44	39
13. Նեֆթչի	38	16	4	18	55-51	36
14. Կայրաթ	39	15	6	18	50-48	36
15. Շիննիկ	37	15	6	16	52-55	36
16. Դինամո Us.	38	12	10	16	45-45	34
17. Ջենիթ	38	10	13	15	36-45	33
18. Գեոլոգ	38	10	11	17	30-45	31
19. Զիմբրուլ	36	9	13	14	33-46	31
20. Կոտայք	33	10	6	17	30-46	26
21. Կուբան	38	8	9	21	38-62	25
22. Պարդաուգավա	38	6	6	26	30-62	18

Բաժինը վարում է Սուրեն ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

Կոպհոպանվի՞ ԽՍՀՄ արտգործնախարարությունը

Նախագահ Բ. Ելցինի վերջին հայտարարությունը այն մասին, որ 1992 թ. հունվարի 1-ից Ռուսաստանը համաձայն է Ֆինանսավորել միայն երեք միութենական նախարարություններ՝ պաշտպանության, կաղի եւ ատոմային էներգետիկայի, նորից օրակարգ մղեցրեց արդեն իսկ լուծված թվացող հարցը միութենական արտգործնախարարության աղագայի մասին: Ինքնիշխան հանրապետությունների արտաքին գործերի նախարարների խորհրդի սեպտեմբերյան որոշման համաձայն, Միության արտաքին քաղաքական գերատեսչությանը վերապահվում են կոորդինատորի եւ այնպիսի սկզբունքային խնդիրների նախապատրաստողի դերը, ինչպիսին է, օրինակ, միջուկային զինաթափումը: *«Ռուսաստանի նախագահի հայտարարությունը չի՞ նշանակում արդյոք, որ Միութենական արտգործնախարարության օրերը հաշված են»*, այդպիսի հարցով *«Դիվանագիտական համայնապատկեր»*-ի թղթակիցը դիմեց ԽՍՀՄ արտգործնախարարության միութենական հանրապետությունների վարչության ղեկավար Յուրի Կուդրյակովին:

Նրա խոսքերով, նախկին նախագահ Բ. Ելցինի հայտարարությունը մեկնաբանելը, անհրաժեշտ է ծանոթանալ տեքստի հետ ամբողջությամբ: Չէ որ ԽՍՀՄ ժողովատգամավորների 6-րդ արտահերթ համագումարի որոշմամբ կենտրոնին վերապահվում են քաղաքականության չորս ուղղություններ, այդ թվում եւ արտաքին քաղաքականությունը:

Ըստ երեւույթին, ինքնիշխան հանրապետությունները ամենեւին էլ մտադիր չեն կասկածի տակ առնել այդ որոշումը: Հոկտեմբերի 22-ին Մոսկվայում սկսվեց խորհրդակցություն 11 ինքնիշխան հանրապետությունների արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչների մասնակցությամբ (բացակայում էր միայն Ադրբեջանի ներկայացուցիչը): Նրանք քննարկում էին խորհրդա-ամերիկյան երկկողմանի հարաբերությունների հարցը ամբողջությամբ, ինչպես նաեւ միջուկային զինաթափման ասպարեզում խորհրդա-ամերիկյան նախաձեռնության իրականացման միջոցները:

Հոկտեմբերի 27-28-ին Մոսկվայում նախատեսվում է անցկացնել հանրապետությունների տնտեսական ղեկավարության հանդիպումը «մեծ յոթնյակի» երկրների ներկայացուցիչների հետ: Նոյեմբերի 5-ին նախատեսված է արտաքին գործերի նախարարների խորհրդի հերթական նիստը:

«Այնպես որ,- ասաց Յու Կուդրյակովը,- *ժամանակը ամեն ինչ իր տեղը կդնի»*: Նա հույս հայտնեց, որ ներկա անցումային փուլը կավարտվի, եւ *«կենտրոնախույս ուժերը կփոխարինվեն կենտրոնածիգ ուժերով: Միակին ավելի հեշտ է, քան սովից միայնակ մահանալը»*, վերջում ասաց Յու Կուդրյակովը:

■

Ադրբեջանը ակտիվացնում է կապերը Իսրայելի հետ

Միջազգային հարաբերությունների ասպարեզում Ադրբեջանն առաջնություն է տալիս այն երկրներին, որոնց հետ ունի բարեկամական եւ բարիդրացիական ամուր կապեր, այդ թվում եւ Իսրայելի հետ, որ արդում են բազմաթիվ բնիկ ադրբեջանցիներ: Այդ մասին հայտարարեց Ադրբեջանի նախագահը Իսրայելի վարչապետի խորհրդական Իցհակ Դավիդի հետ հոկտեմբերի 22-ին Բաքվում տեղի ունեցած հանդիպման ժամանակ:

Զրույցի ընթացքում երկու կողմերը արտահայտվեցին Ադրբեջանի եւ Իսրայելի միջեւ բազմակողմանի կապերի զարգացման կողմ:

Ադրբեջանական մամուլին տված հարցազրույցում Ի. Դավիդը հայտարարեց, որ չի կարելի բաժանել Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանից, սակայն անհրաժեշտ է աղահովել ինքնավարություն, հայ բնակչության անվտանգության երաշխիք եւ լուծել նրա սոցիալ-մշակութային հարցերը: ■

Միասնական վերահսկողություն միջուկային զենքի վրա

ԽՍՀՄ արտաքին գործերի փոխնախարար Ալեքսեյ Օրուխովը, որը գլխավոր խորհրդային փորձագետն է միջուկային զինաթափման ասպարեզում, *«ԻԴ»*-ին տված հարցազրույցում հայտարարեց, թե *«լիովին համոզված է»*, որ կա Միության միջուկային զենքի միասնական վերահսկողության անհրաժեշտություն: Նրա կարծիքով, պետք է միասնական լինի նաեւ զինաթափման պարտավորությունների կատարման վերահսկողությունը, որն իր վրա է վերցրել խորհրդային կողմը: Ընդհանուր վերահսկողությունը, նշում է Ա. Օրուխովը, չի կարող որեւէ վնաս հասցնել նախկին միութենական հանրապետությունների ինքնիշխանությանը:

Հոկտեմբերի վերջին Ալեքսեյ Օրուխովը ԽՍՀՄ նախագահ Միխայիլ Գորբաչովին կուղեկցի Մադրիդ, ուր հանդիպում տեղի կունենա ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի հետ: Նախատեսվում է, որ մադրիդյան հանդիպման ժամանակ կքննարկվեն ԽՍՀՄ-ի եւ ԱՄՆ-ի վերջին նախաձեռնությունները միջուկային զինաթափման ասպարեզում: Ինչպես ասաց Ալեքսեյ Օրուխովը, այդ նախաձեռնությունների բերած նորությունն այն է, որ Մոսկվան ու Վաշինգտոնը մտադրություն հայտնեցին զինաթափման իրենց քայլերն իրագործել առանց որեւէ համաձայնեցվածության եւ վերահսկողության բարդ միջոցների: ■

Ադրբեջանը ցանկանում է իմանալ ճշմարտությունը

Ադրբեջանի Գերագույն խորհրդի պետական անվտանգության, ռազմական գործերի եւ իրավակարգի մշտական հանձնաժողովը հիասթափություն հայտնեց 1990 թ. հունվարի 19-ի լույս 26-ի գիշերը խորհրդային զորքերը Բաքու մտցնելու կապակցությամբ վարվող հետաքննության վերաբերյալ: Հոկտեմբերի 24-ին տեղի ունեցած նիստում հանձնաժողովը նշեց, որ արդեն մոտ 2 տարի է անցել, սակայն հետաքննությունը դեռ ավարտված չէ: Արյունոտ սպանդի մեղսակիցները մինչեւ հիմա պատասխանատվության չեն կանչվել: Նիստում լսվեց իրադարձությունների հետաքննությամբ զբաղվող հանրապետության Գերագույն խորհրդի քննչական հանձնաժողովի հաշվետվությունը: Նշվեց, որ այդ հարցով հարուցված քրեական գործի կասեցումը կենտրոնի կողմից անհիմն է:

Մինչդեռ, Ադրբեջանի ժողովրդական ճակատի *«Ազատություն»* թերթը շարունակում է հրապարակել ՊԱԿ-ի աշխատակցի անստորագիր նյութերը, որը պնդում է, թե զորքերի մուտքը Բաքու հրահրվել է կենտրոնի՝ ԽՄԿԿ ԿԿ-ի, ՊԱԿ-ի, Պաշտպանության նախարարության կողմից: ■

Լուրեր Արցախից

ԼՂՀ-ի ժողովրդական պատգամավորների խորհուրդը ցանկանում է, որ ԼՂՀ-ի պատվիրակությունը մասնակցի ԽՍՀՄ Գերագույն խորհրդի աշխատանքին: Այդ մասին է ասվում միութենական խորհրդարանին, ինչպես նաեւ Միխայիլ Գորբաչովին եւ Բորիս Ելցինին հղած հեռագրում: Լեռնային Ղարաբաղի ղեկավար Լեւոնարդ Պետրոսյանը պատճառաբանում է այդ քայլը Ադրբեջանի խորհրդարանի որոշումով, որի համաձայն, վերականգնվում է Ադրբեջանի անկախությունը, որը 1919-1920 թ. Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության լիիրավ ժառանգորդն է: Մյուս կողմից, նշվում է հեռագրում, հռչակվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, որը ցանկանում է լինել ինքնիշխան պետությունների միության լիիրավ անդամ: ■



Լուսանկարը Հ. ԹԱԼԱԹԻՆՅԱՆԻ

Հոկտեմբերի 24-ին, 3 ամսվա ընդմիջումից հետո Ստեփանակերտ «ժամանեցին» կենտրոնական ամսագրերն ու լրագրերը: Նախկինում նրանք ԼՂՀ-ի վարչական կենտրոն բերվում էին Բաքվից ժամանող ինքնաթիռներով: Այս անգամ կենտրոնական մամուլը Լեռնային Ղարաբաղ բերվեց երկաթգծով, քանի որ Ստեփանակերտի օդանավակայանը վաղուց փակ է: ■

ԼՂՀ-ից ԽՍՀՄ մի խումբ պատգամավորներ, մարզի բոլոր շրջխորհուրդների նախագահները (բացի Շուշիի շրջանի) շնորհակալություն հայտնեցին *«Իզվեստիա»* թերթի խմբագրական կոլեգիային Անդրեյ Նույկինի *«Ղարաբաղյան օրագիր»* հոդվածի հրապարակման համար: «Իզվեստիա» հղած հեռագրում նշվում է, որ Լեռնային Ղարաբաղի բնակչությունը պատրաստ է հրապարակախոսի դատապարտողը լինել:

Ադրբեջանի գլխավոր դատախազը քրեական գործ հարուցեց Ա. Նույկինի դեմ «ազգամիջյան թշնամանք հրահրելու համար»: Միաժամանակ Ադրբեջանի Գերագույն խորհուրդը բողոքներ հղեց Ռուսաստանի եւ Ղազախստանի նախագահներին, ԽՍՀՄ գլխավոր դատախազին եւ «Իզվեստիա»ի գլխավոր խմբագրին: ■

«Մենք ցենք էլ չենք ստանա Արեւմուտքից, մինչեւ որ չտարզվի իրավիճակը երկրում»

Այդ մասին հայտարարեց *«Դիվանագիտական համայնապատկեր»* գործակալությանը տված հարցազրույցում ԽՍՀՄ արտգործնախարարության միջազգային տնտեսական հարաբերությունների վարչության փորձագետներից մեկը: Նա նոր էր վերադարձել Բանգոկում կայացած «մեծ յոթնյակի» հանդիպումից եւ Միջազգային վալյուտային հիմնադրամի (ՄՎՀ) եւ Համաշխարհային բանկի նստաշրջանից: *«Մեզ պարզ հասկացրին, որ ոչ մի օգնություն չի լինի, մինչեւ որ պարզ չդառնա, թե ում հետ է անհրաժեշտ գործ ունենալ ԽՍՀՄ-ում»*, նշեց փորձագետը:

«Բանգոկում մենք երկար ու բարակ բացատրում էինք, թե ինչ ուղղություններով են զարգանալու մեր բարեփոխումները: Ինչ վերաբերում է օգնությանը, ապա այն կցուցաբերվի միայն այն ծրագրերի եւ բարեփոխումների համաձայն, որոնք բավարարում են մեր պարտնյորներին: Բոլորը շահագրգռվածություն էին հայտնում, որ նախկին միութենական հանրապետությունները մտնեն տնտեսական հանրույթ:

«Անհրաժեշտ է, որ լինի «ինչ-որ մեկը», որի հետ հնարավոր լիներ գործ ունենալ միութենական մակարդակով, իսկ երբ անցյալ ուրբաթ Մոսկվայում այդպիսի պայմանագիրը վերջապես ստորագրվեց, Բանգոկում բոլոր նիստերն արդեն ավարտվել էին եւ մասնակիցները՝ հավաքել ճամպրուկները», շարունակեց խորհրդային պատվիրակության անդամը:

Նրա կարծիքով, անհրաժեշտ է մոտ 10 ամիս, որ լուծվի ԽՍՀՄ-ին Միջազգային վալյուտային հիմնադրամի լիիրավ անդամի կարգավիճակ տրամադրելու հարցը: *«Այստեղ շատ տեխնիկական դժվարություններ, դժվարություններ քաղաքական են: ՄՎՀ-ն չի ընդունում մեր քաղաքական խառնաշփոթը, այլ ցանկանում է գործ ունենալ միասնական ԽՍՀՄ-ի հետ, որպես միջազգային իրավիճակի սուբյեկտի»*, նշեց փորձագետը:

Հոկտեմբերի 20-ին Մոսկվա են ժամանում «յոթնյակի» Ֆինանսների նախարարների տեղակալները՝ միութենական եւ հանրապետական ղեկավարների, Ֆինանսական գերատեսչությունների ներկայացուցիչների հետ բանակցություններ անցկացնելու նպատակով: ■

Ադրբեջանը չի ստորագրի տնտեսական պայմանագիրը

Ադրբեջանի նախագահի մամլո ծառայությունը հերքեց այն լուրը, որ Այազ Սուրալիբովը հոկտեմբերի վերջին Մոսկվա կատարելիք այցի ժամանակ նախատեսում է ստորագրել տնտեսական հանրության մասին պայմանագիրը: Այդ մասին հաղորդվեց հոկտեմբերի 21-ին, **«Վրեմյա»** ծրագրում:

Ադրբեջանը, հայտարարում է մամլո ծառայությունը, ավելի արդյունավետ է գտնում հանրապետությունների հետ երկկողմանի հորիզոնական կապերի խորացումն ու զարգացումը:

Այդպիսի պայմանագրեր արդեն կնքվել են Էստոնիայի, Ղազախստանի, Ուզբեկստանի, Բելոռուսիայի եւ Վրաստանի հետ: Ուկրաինայի, Տաջիկստանի, Թուրքմենիայի եւ Ռուսաստանի հետ նման պայմանագրեր են մշակվում: ■

Հեռավոր Արեւելքի ժողովատգամավորները սպառնում են

Խաբարովսկում ավարտված Հեռավոր Արեւելքի ժողովրդական պատգամավորների միության համաժողովը վերջնագիր ներկայացրեց ԽՍՀՄ եւ Ռուսաստանի նախագահներին: Ինչպես հաղորդում է **«ԻԴ»**ի թղթակիցը, Գորբաչովին եւ Ելցինին ուղղված դիմումի տեքստում նշվում է, որ կամ Հեռավոր Արեւելքի շրջան են մտցվելու նորմալ գործունեության համար անհրաժեշտ միջոցներ, կամ Հեռավոր Արեւելքը **«ստանալու է լիակատար ինքնավարության իրավունք»**:

Սախալինի մարզի վարչության ղեկավար Վալենտին Ֆյոդորովը այդ առիթով հայտարարեց, որ, իր կարծիքով, Հեռավոր Արեւելքի հանրապետությունը անհրաժեշտ է ոչ թե տեղական քաղաքական ամբիցիաները բավարարելու համար, այլ Մոսկվայի վրա ճնշում գործադրելու միջոց է: ■

Վրաստանում աճում է կանանց հանցագործությունը

Վրաստանի դատախազության բարձրաստիճան պաշտոնյաներից մեկի՝ Նուգզար Կերեսելիձեի խոսքերով, 1991 թ. առաջին վեց ամիսների ընթացքում կատարված 6335 հանցագործություններից 1024-ը բաժին է ընկնում կանանց: Այս տարի նրանց խղճի վրա է երեք ընդանություն:

Բացի այդ, Ն. Կերեսելիձեի խոսքերով, կանանց հանցագործ բանդաների ստեղծման միտում է նկատվում: Այդպիսի խմբերից մեկը 1991 թ. հունվար ամսից մինչեւ ապրիլը կարողացավ կողոպտել իր հայրենակիցներին 300 հազար ռուբլի գումարի չափով: ■

Մոլդովան լավ տնտեսական հեռանկարներ ունի

Մոլդովայի ազգային ռադիոյին տված հարցազրույցում Նիկոլայ Յաշինսկին արտահայտվեց Մոլդովայի եւ «նախկին Միության հանրապետությունների» հետ առեւտրական կապերի պահպանման եւ զարգացման օգտին:

Չնայած ամենուր երեւում են տնտեսական խոսի հետքերը, նա գտնում է, որ Մոլդովան ունի լավ տնտեսական հեռանկարներ:

Ն. Յաշինսկու կարծիքով, մոլդովացիները, ուկրաինացիները, գագաուզները եւ Բեսարաբիայի հինավուրց հողի վրա ապրող մյուս ազգությունների ներկայացուցիչները պետք է միասնաբար աջակցեն կառավարությանը: **«Վեճերի ժամանակը չէ: Անհրաժեշտ է նվաճել ազատություն ու անկախություն»**, նշեց նա: ■

Խաչքար Գերմանիային

Կիրովականի **«Ինտերկաթ»** մարզաառեւտրական բարեգործական կենտրոնի եւ Գերմանիայի **«Արբայթեր-Վոլֆվարդ»** Ֆիրմայի համագործակցությունը շուրջ երկու տարվա պատմություն ունի: Մեր գերմանացի բարեկամներն արդեն մի քանի անգամ օգնություն են ուղարկել աղետի գոտուն: Օրերս «Ինտերկաթի» նախագահ Նորիկ Ջուլոյանը եւ ճանապարհորդ Սերգեյ Դանիելյանը Գերմանիա էին տարել վերջինիս ճանապարհած 2 մետր բարձրություն ունեցող մի խաչքար՝ որպես երախտիքի արձագանք: Խաչքարը տեղադրվեց Հյոթերգեր քաղաքում: «Արբայթեր-Վոլֆվարդ» Ֆիրման այս անգամ նույնպես դատարկածեռն չճանապարհեց կիրովականցիներին:

Նրանք 44 հազար մարկ արժողությամբ օգնություն առաքեցին աղետյալ քաղաքին. դեղորայք, միանգամյա օգտագործման սրսկիչներ, հիվանդանոցային հատուկ մահճակալներ, կաթի փոշի, մանկական սնունդ եւ հագուստեղեն Գեղաշենից բռնագաղթվածների համար:

Մանրել ՄԻՔԱՅԵԼՆ

Լուրերը interfax-ի եւ մեր սեփ. թղթակիցների

Azg semi-weekly, 47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010 phone: 58-1841, fax: (8-852)56-2941, telex: 243267 SULA SU
Խմբագիր՝ Հ. ԱՎԵՏԻՔԵԱՆ Editor H. AVEDIKIAN
Դասիչ՝ 69149
«Պարբերական» հրատ. տպարան
Macintosh համակարգչային շարուածքը Ռ.Ա.Կ. մամլոյ, եւ տեղեկատուութեան կենտրոնի:

digitised by A.R.A.R.@